



Ստրաֆուրգ, 17-ը դեկտեմբերի, 2003թ.

Կարծիք թիվ 269/2003

Գաղտնի  
CDL-AD (2003) 21  
Բնօրինակ՝ անգլերեն

ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

հեղինակներ՝  
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ  
և  
Վենետիկյան Հանձնաժողով

հիմքում դրված են

Պրն. Մայքլ ԿՐԵՆԵՐԻ և  
(Վենետիկյան Հանձնաժողովի փորձագետ, Գերմանիա)  
մեկնաբանությունները

Ըովանդակություն

I.	Ներածություն .....	3
II.	Ընդհանուր դիտողություններ .....	3
III.	Ընտրական օրենսգիրքը. քննարկման ենթակա հիմնահարցներ .....	4
IV.	Ընտրությունների կազմակերպումը և անցկացումը. քննարկման ենթակա հիմնահարցներ.....	15
V.	Առաջարկությունների սեղմագիր .....	18
	Հավելված. օգտագործված փաստաթղթենր.....	21

## I. Ներածություն

1. Սույն մեկնաբանություններում մատնանշվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությանն առնչվող առավել խնդրահարույց հիմնահարցները և ներկայացվում են առաջարկություններ ընտրությունների թե իրավական կողմի, թե կազմակերպման ու անցկացման մասին: Այնուհանդեմ, հիմնական շեշտադրումն ընկնում է Ընտրական օրենսգրքի բարենորոգումների վրա:
2. Վերլուծությունը և առաջարկությունները հիմնված են հետևյալ փաստաթղթերի վրա.
  - Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,
  - Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 1999թ. փետրվարի 5-ին ընդունված Ընտրական օրենսգրքը 2002թ. օգոստոսի 3-ի դրությամբ դրանում կատարված փոփոխություններով և լրացումներով հանդեմ, CDL (2003) 52,
  - Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխությունների համատեղ վերլուծություն, որն ընդունվել է 2002թ. հուլիսին ԵԱՀԿ/ՃՀՄԻԳ-ի և Վեննտիկյան Հանձնաժողովի կողմից, CDL-AD (2002) 29,
  - Ընտրական իրավահարաբերություններում լավ գործելակերպի կանոնագիրք, Ուղղույց և Բացատրական գներույց, որոնք ընդունվել են Վեննտիկյան Հանձնաժողովի կողմից 2002թ. հոկտեմբերի 18-19-ին, CDL-AD (2002) 23 փոփ., և
  - այլ փաստաթղթեր և ընտրությունների դիտորդների գեկույցներ, որոնց ցուցակը ներկայացվում է Հավելվածի տեսքով:
3. Սույն փաստաթղթում հնարավոր չի եղել հաշվի առնել այլ օրենքների՝ ընտրությունների վերաբերյալ դրույթները, օրինակ, «Քաղաքական կուսակցությունների մասին», «Զանգվածային լրատվության միջոցների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կամ Քրեական Օրենսգրքի դրույթները:

## II. Ընդհանուր դիտողություններ

4. 1991թ. սնապտեմբերին անկախության նվաճումից հետո Հայաստանի Հանրապետությունում անցկացվել են մի քանի ընտրություններ: Ամենաթարմ ընտրությունները, որոնք, մասնավորապես, առաջիններն էին 2001թ. հունվարին Եվրոպայի Խորհրդին Հայաստանի անդամակցությունից ի վեր, 2002թ. հոկտեմբերին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, 2003թ. փենտրվար/մարտ ամիսների նախագահական ընտրությունները և 2003թ. մայիսի խորհրդարանական ընտրություններն եղան:
5. Զնայած որ կարևոր դրական տեղաշարժեր են կատարվել, այսուհանդեմ, անկախացումից ի վեր անցկացված ընտրությունները, միջազգային դիտորդների գեկույցների համաձայն, չեն համապատասխանել ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին: Սրա առավել թարմ օրինակ ծառայեցին ամենաթարմ՝ 2003թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունները, որոնք անցկացվեցին 2002թ. փոփոխությունների և լրացումների ենթարկված Ընտրական օրենսգրքի համաձայն:

6. Ընտրական օրենսգիրքը, 2002թ. դրանում կատարված փոփոխություններով և լրացումներով հանդերձ, ընդհանուր առմամբ կազմում է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու նախահիմքը: Այնուհանդերձ, որոշ դրույթների կարող է համարվել խնդրահարույց կամ վիճահարույց: Ավելին, անցյալում ընտրական օրենսդրությունը պատշաճ կերպով չի իրագործվել կամ պահպանվել: Սույն մեկնաբանություններում գնահատվում է ընտրական օրենսդրության համապատասխանությունը ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին, ինչպես նաև՝ այդ օրենսդրության պահանջների կատարումը 2003թ. նախագահական և խորհրդարանական ընտրությունների ընթացքում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ՎԵՆԵՏԻԿԱՆ Հանձնաժողովի կողմից իրականացված Համատեղ գնահատման (CDL-AD (2002) 29) առաջարկությունների մեծ մասը տեղ են գտել սույն մեկնաբանություններում:

7. Ինչ վերաբերում է ընտրական հանձնաժողովների ձևավորմանը և դրանցում նրոշումների կայացմանը, ապա հարկ է նշել, որ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու քաղաքական կամքի բացակայությունը կարող է վտանգել ցանկացած իրավաբանական լուծման արդյունավետությունը:

### **III. Ընտրական օրենսգիրքը. քննարկման ենթակա հիմնահարցեր**

8. **Ընտրական հանձնաժողովների ձևավորումը.** Ընտրական օրենսգրքով նախատեսվում է նուատիճան հանձնաժողովների կառուցվածք՝ կենտրոնական Ընտրական Հանձնաժողով (ԿՀՀ), Տարածքային Ընտրական Հանձնաժողովներ (ՏՀՀ, մեծամասնական յուրաքանչյուր ընտրատարածքի համար մեկական ՏՀՀ) և Տեղամասային Ընտրական Հանձնաժողովներ (ՏԵՂՀՀ, յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար մեկական ՏԵՂՀՀ): Ընտրական օրենսգրքի համաձայն, ԿՀՀ-ն կազմված է Հանրապետության Նախագահի կողմից առաջադրվող նրեք անդամներից և ընթացիկ կամ լուծարված Ազգային ժողովի գործունության մեկնարկի ժամանակ դրանում նորած յուրաքանչյուր խմբավորման (կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի) մեկական ներկայացուցիչներից, որոնք նշանակվում են մշտական գործող մարմինների որոշ մամբ (հոդված 35.1): Ներկայում ԿՀՀ-ն ունի ընդամենը ինը անդամ: ՏՀՀ-ները ձևավորվում են նոյն ընթացակարգով (հոդված 36.1): ՏԵՂՀՀ-ների անդամները նշանակվում են համապատասխան ՏՀՀ-ի կողմից, «ՏՀՀ-ի մեկ անդամի հաշվով ՏԵՂՀՀ-ի մեկ անդամ» սկզբունքի համաձայն (հոդված 37.1):

9. Զնայած 2002թ. հուլիսի փոփոխություններով Օրենսգրքում կատարված մի քանի դրական տեղաշարժներին, օրինակ, այն, որ քաղաքական կուսակցությունները և կառավարությունն այլևս չեն կարող հետ կանչել ընտրական հանձնաժողովների (իրենց կողմից նշանակված) անդամներին (հոդված 38.2), Օրենսգրքը, այնուհանդերձ, չի երաշխավորվում բավականաչափ բազմակարծիք ընտրական հանձնաժողովների նշանակումը: Զնայած որ նշանակումը ֆորմալ իմաստով այնքան էլ խնդրահարույց չէ, իրականում նախահագական աշխատակազմը շարունակում է մեծապես ազդել հանձնաժողովների աշխատանքի վրա: Հարկ է նշել, որ Նախագահի և կառավարման կուսակցությունների կողմից առաջադրված անդամները 2003թ. ընտրությունների ընթացքում փաստացի կազմում էին ԿՀՀ-ի և ՏՀՀ-ների անդամների մեծամասնությունը (և, գրեթե բոլոր դեպքերում, զբաղեցնում էին նաև համապատասխան հանձնաժողովների նախագահների պաշտոնները): Սա հատկապես խնդրահարույց է նախագահական ընտրությունների ներկրորդ փուլում, եթե

գործող նախագահին նրաշխավորվում է «ներկայացվածություն» ընտրական հանձնաժողովի առնվազն երեք անդամների, գործող նախագահին սատարող կուսակցությունները ներկայացնող՝ հանձնաժողովի այլ անդամների միջոցով: Ընդդիմադիրը, սակայն, հնարավոր է, որևէ ներկայացնությամբ չունենա և փաստացի նղավ վերջին ընտրություններում): Հանձնաժողովների գործունեության և որոշումների կայացման գործընթացների թափանցիկության պակասի հետ մեկտեղ (տես ստորև), նշանակալից քաղաքական շահերի համարժեք հավասարակշռություն (որը, հնարավոր է, չհամընկնի գրանցված կուսակցությունների և դաշինքների միջև առկա հավասարակշռությանը) ապահովող ընտրական հանձնաժողովների չստեղծումը կարող է համարվել լուրջ խոչընդուռ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացների անկողմնակալությանը, որը պետք է հաղթահարել նախքան հաջորդ ընտրությունները:

10. Հաշվի առնելով վերը թվարկված պատճառները, առաջարկվում է վերանայել ընտրական հանձնաժողովների, մասնավորապես ԿԸՀ-ի անդամների թեկնածությունների առաջադրման և նշանակման մեթոդը, որպեսզի բարձրացվի ընտրությունների կազմակերպման և անցկացման անկողմնակալությունը: Նոյնիսկ չնայած այն հանգամանքին, որ ընտրական հանձնաժողովների ծնավորման խնդիրը քաղաքական առումով շատ նուրբ է և պետք է մեծ զգուշությամբ կարգավորվի, անհրաժեշտ է դիտարկել բարեփոխումներ կատարելու հարցը: Կարենի է քննարկել, օրինակ, թե արդյոք նպատակահարմար է ներդնել զուտ «կուսակցական հավասարակշռության մոդել», որի համաձայն հանձնաժողովների բոլոր անդամների թեկնածություններն առաջադրվում են քաղաքական կուսակցությունների կողմից, թե կիրառել խառը «կուսակցական հավասարակշռության մոդել»: Վերջինի պարագայում ԿԸՀ-ում որոշ տեղեր են նախատեսվում են անկուսակցական անձաց համար, ում թեկնածությունների առաջադրումը կամ նշանակումը կատարում է ոչ թե կառավարությունը, այլ դատական համակարգը (օրինակ, Սահմանադրական Դատարանը), կամ Խորհրդարանը (օրինակ, ձայների որակյալ մեծամասնությամբ): Յանկացած պարագայում, հանձնաժողովի աշխատանքի նկատմամբ նախագահի ազդեցությունը թուլացնելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի վարչակազմը յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովում մեկից ավելի ներկայացնությամբ չունենա: Ամփոփ, կարենի է ասել, որ ընտրական հանձնաժողովների կազմում պետք է ներկայացված լինեն բոլոր հիմնական քաղաքական ուժերը, սակայն այնպես, որպեսզի քաղաքական որևէ շահ կրող իր ձեռքը չվերցնի որոշումներ կայացնելու մենաշնորհը:

11. Ընտրական հանձնաժողովների գործունեության կազմակերպումը: Համաձայն 39.7 հոդվածի, ընտրական հանձնաժողովների որոշումները վավեր են, եթե հանձնաժողովի անդամների կենսից ավելին մասնակցել են քվեարկությանը: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են քվեարկության մասնակիցների կենսից ավելին: Զայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը: Այսպիսով, եթեն քվեարկությանը մասնակցում են հանձնաժողովի անդամներից միայն իինքը կամ վեցը, անգամ կարևորագույն որոշումների ընդունումը հնարավոր է դառնում ընթացիկ ինը անդամներից միայն երեքի «կողմ» քվեարկությամբ:

12. Չնայած որ անգամ միջազգային փորձը վկայում է, որ շատ հաճախ ընտրական որևէ հանձնաժողովի որոշում կայացնելու համար պահանջվում է դրա անդամների մեծամասնության ներկայությունը և ներկա զտնվող անդամների ձայների մեծամասնությունը (և այն, որ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է ձայները հավասար բաշխվելու դեպքում), այնուհանդերձ, այս մոտենցումները, թերևս, կարենի է

վերանայել Հայաստանի ընթացիկ քաղաքական իրավիճակի պայմաններում: Հաշվի առնելով Հայաստանում առկա քաղաքական խոշորագույն շահերի քավարար հավասարակշռություն ապահովող ընտրական հանձնաժողովներ ստեղծելու դժվարություններ, հնարավոր է, որ նպատակահարմար լինի քվորումի ավելի քարձր չափանիշ սահմանել, նպատակ հետապնդելով ապահովել, որպեսզի հանձնաժողովների կողմից որոշումների կայացման գործընթացը հիմնվի առավել լայն համաձայնության վրա: Մի քանի նրկընթրում, օրինակ, ընտրական հանձնաժողովի նիստն իրավասու է, եթե ներկա են անդամների առնվազն երկու նրբորդը: (Մի քանի նրկընթրում անգամ պահանջվում է բոլոր անդամների ներկայությունը, որը, սակայն, Հայաստանի պարագայում խորհուրդ չի տրվում, հաշվի առնելով հանձնաժողովի աշխատանքի արգելակման քարձր ռիսկը).

13. Վերջին ընտրությունների ընթացքում մի քանի տեղամասներում նկատվել էր, որ ՏԵՂՀ-ների անդամների կազմը փոխվել էր ընտրություններից ոչ շատ ժամանակ առաջ: Որոշ դեպքերում անդամները հանձնաժողովի կազմից հետացվել էին քվեարկությանը նախորդող օրվա ընթացքում, և նոր առաջադրվող թեմկնածուները ժամանակին չեն հասցըլ գրանցվել որպես հանձնաժողովի անդամներ: Օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ կամ արգելելու ընտրական հանձնաժողովի հետացումը քվեարկության օրվանն անմիջապես նախորդող ժամանակահատվածում, կամ հետաձգելու հանձնաժողովի կազմից անդամին հետացնելու որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը մինչև նոր անդամի սահմանված կարգով գրանցվելը:

14. Ընտրատարածքների վերաձևումները: Ինչ վերաբերում է ընտրատարածքների սահմանագծմանը, Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ ընտրատարածքները պետք է պարունակեն հավասար թվով քվեներ, բայց միևնույն ժամանակ, թույլատրվում են քվեների թվի՝ մինչև 15%-ի հասնող տատանումներ (տես Ընտրական օրենսգրքի առաջին գլուխը): Միջազգային դիտորդները քննադատել են այն փաստը, որ Ընտրական օրենսգրքում չի նշվում, թե ինչպիսի կարգով պետք է հաշվարկվեն տարբերությունները: ԵԱՀԿ/ԺՀՄԴԳ-ը (2003b: 5) գտնում է, որ հնարավոր չէ պարզել, թե արդյոք ընտրատարածքների չափերի միջև առկա մեծ մասշտաբների հասնող տարբերությունները համապատասխանում են օրենքով թույլատրված սահմաններին:

15. Զնայած որ գործող Ընտրական օրենսգրքի նրբորդ գլուխն ընթերցնելիս պարզ է դառնում, որ ընտրատարածքները ձևավորվում և համարակալվում են մարզական ներկայացմամբ ԿԸՀ-ի կողմից գրանցված քվեարկության մասնակիցների թվաքանակի հիման վրա, առաջարկվում է, որպեսզի ընտրատարածքները ձևավորեն և վերաձևավորեն կարգն առավել ճշգրտուեն և թափանցիկորեն կարգավորված լինի Ընտրական օրենսգրքով: Այստեղ նպատակահարմար կլիներ մտածել տատանման առավելագույն չափը 15%-ից մինչև 10% նվազեցնելու մասին:

16. Ընտրատարածքներ ձևավորելու ժամկետը: Ընտրական օրենսգրքի նրբորդ գլուխ համաձայն, ԿԸՀ-ն սահմանում է ընտրատարածքներն ընտրության օրվանից առնվազն 90 օր առաջ: Շատ կարևոր է, որպեսզի ընտրատարածքները ձևավորեն ընտրությունից բավականաչափ առաջ: Սա անհրաժեշտ է, որպեսզի ապահովվի, որպեսզի քաղաքական կուսակցությունները և հնարավոր թեմկնածուները հնարավորություն ունենան ծանոթանալու ընտրատարածքների ժողովրդագրությանը, որպեսզի պարզեն կոնկրետ ընտրատարածքում մրցելու հիմնավորվածությունը և նախընտրական քարոզարշավի նախնական պահանջարկում կատարեն: 90-օրյա ժամկետը բավականին կարծ է: Առաջարկվում է Օրենսգրքով նախատեսել, որպեսզի բոլոր

ընտրատարածքներն առանձնացվեն և հրապարակվեն ընտրությունից առնվազն վեց ամիս առաջ:

17. Մեկնածուներին ներկայացվող պահանջները. «Մշտական բնակություն»: Հայաստանի Հանրապետության տարածքում «մշտական բնակություն» ունենալու որոշակի ժամանակահատվածն ապացուցելու՝ թեկնածուներին ներկայացվող պահանջը միջազգային դիտորդների կողմից առավել ցայտուն կերպով ընդգծվելու որպես հիմնախնդիր 2003 թվականին, քանի որ բնակության հարցերը կանոնակարգող օրենքը՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգիրքը, ըստ էության, նման հասկացություն չի պարունակում (տես ԵԱՀԿ/ԺՀՄԴ 2003b): Սույն մեկնաբանություններում հնարավոր չէ գնահատել, թե արդյոք Ընտրական օրենսգիրքը համահունչ է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքին: Այնուհանդեռձ, ցանկացած դեպքում շատ կարևոր է, որպեսզի «մշտական բնակության» հասկացությունը հստակորեն սահմանվի, եթե այն օգտագործվելու է որպես թեկնածուներին ներկայացվող պահանջ:

18. Անհամատնդեղիության լսնդիրներ: 97.2 և 97.3 հոդվածներով հանրային պաշտոններ զբաղեցնող որոշակի անձանց արգելվում է Ազգային ժողովի ընտրություններում իրենց թեկնածությունը դնելը, բացառությամբ ներ նրանք ընտրություններում որպես թեկնածու գրանցվելուց առաջ պաշտոնաթող են լինում: Այնուհանդեռձ, համամասնական և մեծամասնական ընտրակարգերի դեպքում անհամատնդեղիության պահանջները տարբերվում են: Այսպես, օրինակ, նախարարները, փոխնախարարները, Երևանի քաղաքապետը, փոխմարզպետները, փոխսեամայնքապետները, համայնքապետները և սոցիալական ապահովագրության աշխատակիցներն իրավասու չեն մեծամասնական ընտրակարգով առաջադրվել առանց պաշտոնաթող լինելու (հոդված 97.2): Այնուհանդեռձ, նրանք իրավասու են առաջադրվել համամասնական ընտրակարգով (հոդված 97.3) առանց պաշտոնաթող լինելու: Այսպիսով, համատնդեղիության դրույթներն Ազգային ժողովի ընտրությունների պարագայում միատեսակ չեն: Սահմանափակումներն անհամաշփորեն տարբերվում են խորհրդարանական ընտրությունների մեծամասնական և համամասնական ընտրակարգերի միջև: Վճարաբար, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ սահմանելու Ազգային ժողովի թեկնածուների համար պաշտոննական համատնդեղիության հավասար պայմաններ:

19. Մեկնածուների առաջադրումը: Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն գրանցված կուսակցությունները, ինչպես նաև առնվազն 50 քաղաքացիներից կազմված և գրանցված նախադենող խմբերը (հոդված 104 և հոդված 105): Այնուհանդեռձ, 104.1 հոդվածի երկրորդ նախադասությամբ կուսակցությունների դաշինքներին չի թույլատրվում այդպիսի թեկնածուների առաջադրել: Նման արգելքի հիմնավորումը բնավ պարզ չէ: Այսպիսով, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ թույլատրելու, որպեսզի թեկնածություններ առաջադրվեն կուսակցությունների դաշինքների կողմից Ազգային ժողովի ոչ միայն համամասնական, այլ նաև մեծամասնական ընտրակարգերում:

20. Ստորագրությունների նվազագույն թվաքանակը: Ինչ վերաբերում է Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ընտրակարգին, կուսակցական ցուցակներ գրանցելու համար 30,000 ստորագրություն հավաքելու պահանջը հարաբերականորեն բարձր է: Վենատիկյան Հանձնաժողորվի Ընտրական իրավահարաբերություններում

լավ գործելակերպի կանոնագրքի (I.1.3.ii) համաձայն, օրենքը չպետք է պահանջի, որպեսզի տվյալ ընտրատարածքում առկա ընտրողների ընդհանուր թվի 1%-ից ավելի շատերի ստորագրությունները հավաքվեն: Այնուհանդերձ, վերին սահմանագծին մոտ գուցանիշ կիրառելը պարտավորություն չէ: 2003թ. խորհրդարանական ընտրություններում գրանցված ընտրողների ընդհանուր թիվը կազմում էր մոտ 2.3 միլիոն: Հնտևաբար, նպատակահարմար կլիներ, ըստ երևոյթին, էապես նվազեցնել կուսակցական ցուցակների համար պահանջվող ստորագրությունների թվաքանակը: Եթե առաջնորդվենք 1%-ի սկզբունքով, ապա մեծամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուների պարագայում պահանջվող 500 ստորագրությունն անգամ կարող է չափազանց շատ համարվել:

**21. Ստորագրությունների ստուգում:** Ընտրական օրենսգիրքն ամրագրում է թեկնածուների կամ կուսակցական ցուցակների առաջադրման համար անհրաժեշտ ստորագրությունների ստուգման ընթացակարգ: Պահանջվում է ստորագրությունների միայն 2%-ի ստուգում ԿԸՀ-ի կողմից (նախագահական ընտրությունների կամ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգի պարագայում) կամ ՏԸՀ-ի կողմից (Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգի դեպքում) (տես հոդված 70.3, հոդված 100.10-ի և հոդված 107-ի հետ մեկտեղ): 70.3 հոդվածի համաձայն, «... ստորագրությունների ընդհանուր թվի երկու տոկոսում վավեր են անվավեր ստորագրությունների հարաբերակցությունը համամասնորեն տարածում է ստորագրությունների ընդհանուր թվի վրա՝ ստանալով ստորագրությունների ընդհանուր թվում վավեր են անվավեր ստորագրությունների քանակը»: Սա նշանակում է, որ 2% ընտրանքի միջոցով ստուգման արդյունքում քացահայտված անվավեր ստորագրությունների թիվը քազմապատկվում է 50-ով, որպեսզի համաշափությամբ որոշվի, թե անվավեր քանի ստորագրություններ է առկա ներկայացված ողջ ցուցակում:

**22. Ստուգման այս ընթացակարգը չի կարող նպատակահարմար համարվել:** Ամենայն լրջությամբ առաջարկվում է, որպեսզի ստուգվեն բոլոր ստորագրությունները, առնվազն մինչև պահանջվող նվազագույն թվին հասնելը: Այս տարբերակը համահունչ է Վենետիկյան Հանձնաժողովի Ընտրական իրավահարաբերություններում լավ գործելակերպի կանոնագրքին, որով նախատեսվում է, որ ստուգման գործընթացը պետք է սկզբունքորեն ներառի բոլոր ստորագրությունները: Միայն այն դեպքում, եթե կասկած չկա, որ վավեր ստորագրությունների պահանջվող թվաքանակն ապահովվել է, անհրաժեշտ չէ ստուգել մնացած ստորագրությունները (CDL-AD (2002) 23 փոփ., կետ I.1.3): Գործնականում, բոլոր ստորագրությունների ստուգման կապակցությամբ պետք է որ շատ խնդիրներ չառաջանան, հատկապես նախագահական թեկնածուների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուների կողմից ներկայացվող ստորագրությունների պարագայում, հաշվի առնելով նրանցից պահանջվող ստորագրությունների հարաբերականորեն փոքր թվաքանակը (500): Պետք է որ դժվարություններ չծագեն նաև համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ցուցակների գրանցման համար պահանջող ստորագրությունների նվազագույն քանակն ամբողջությամբ ստուգելու կապակցությամբ:

**23. Գույքի հայտարարագիրը:** Նախագահի պաշտոնի և Ազգային ժողովի համար առաջադրվող թեկնածուներից նաև պահանջվում է ներկայացնել իրենց պատկանող մասնավոր սեփականության և իրենց ընտանիքի անդամների վերջին տարվա եկամուտների հայտարարագիր (հոդված 67.7, հոդված 100.7, հոդված 106.6): Գույքի հայտարարագիր նկատմամբ պահանջները պետք է առավել մարդարանորեն սահմանվեն: Ավելին, ընտրական հանձնաժողովը պետք է համահունչ և միասնական

պահանջներ սահմանի առ այն, թե ինչն է անհրաժեշտ հայտարարագրել: Գործնականում կարելի է ասել, որ գույքի հայտարարագրման չափանիշները վերջին ընտրությունների ընթացքում երկրում հստակորեն և համահունչ կերպով չեն կիրառվել:

**24. Թեկնածություններ հանելու:** Հաշվի առնելով խորհրդարանական ընտրություններում մեծ թվով թեկնածություններ հանելու երևոյթի առկայությունը, հատկապես մեծամասնական ընտրակարգի պարագայում, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ արգելելու թեկնածությունների կամ կուսակցական ցուցակների հանումը, բացառությամբ հստակորեն սահմանված չափորոշիչների պարագայում (տես նաև CDL-AD (2002) 29, կետ 12):

**25. Նախընտրական քարոզարշավը:** 2003թ. ընտրություններում, հատկապես նախագահական ընտրություններում, լայն տարածում է ունեցել նախընտրական քարոզարշավի ընթացքում պետական ռեսուրսների օգտագործումը/չարաշահումը հօգուտ գործող պաշտոնյաների: Ողջունելի է, որ Ընտրական օրենսգրքով պետական կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին (և դրանց աշխատակիցներին՝ վերջիններիս պաշտոնավարման ընթացքում) արգելվում է նախընտրական քարոզարշավ անցկացնել կամ քարոզարշավի փաստաթյուրն տարածել (հոդված 18.4): Ավելին, Ընտրական օրենսգրքի 22.2 հոդվածով պետական և հանրային լրատվամիջոցների աշխատակիցներին և պաշտոնատար անձանց արգելվում է իրենց լծակները գործադրել թեկնածուների միջև անհավասար պայմաններ ստեղծելու նպատակով: Առաջարկվում է, որպեսզի սույն դրույթն ընդարձակվի և հստակորեն նախատեսվի, որ այս արգելքը վերաբերում է նաև քարոզարշավի մասին լրատվության ներկայացմանը պետական և հանրային լրատվամիջոցների կողմից: Ընտրական օրենսգրքով արգելվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանգանակությունների կատարումը կոնկրետ թեկնածուների կամ կուսակցությունների ընտրական հիմնադրամներին (հոդված 25.2): Այնուհանդեմ, որևէ օրենքն ինքնակիրարկիչ չէ, և այս դրույթների գործողությունը մեծապես կախված է օրենքի կիրարկման ուղղությամբ պաշտոնատար անձանց բարեխղճությունից և կամքից:

**26. Լրատվամիջոցները:** Զնայած որ մի շաբթ պետություններ իրենց ընտրական օրենքներով չեն նախատեսում ընտրությունների և նախընտրական քարոզարշավների ընթացքում լրատվամիջոցների վարքագիծը կանոնակարգող նորմեր, այնուհանդեմ, գոյություն ունեն որոշ ոլորտներ, որոնք ընտրական օրենսդրությամբ կարող են նախատեսվել, օրինակ, թեկնածուներին և կուսակցություններին ժամանակի և տարածքի հատկացման, քաղաքական գովազդի, հասարակական կարծիքի հարցումների արդյունքների ներկայացման, լրատվամիջոցներով ընտրուների իրազեկման քարոզարշավների առնչությամբ և այլն: Հայաստանի Ընտրական օրենսգիրքը պարունակում է վարքագիծի կանոնակարգման նպատակ հետապնդող որոշ դրույթներ, հատկապես նախընտրական քարոզարշավի ընթացքում հանրային լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ (տես հոդված 20): Այնուհանդեմ, հնարավոր է, որ նպատակահարմար լինի լրացուցիչ դրույթների ավելացումը, որպեսզի օրենքով նախատեսվեն մասնավոր լրատվամիջոցների վարքագիծը կանոնակարգող նորմեր: Առանձնակի կարևորություն ունի նաև Ընտրական օրենսգրքի՝ լրատվամիջոցներին առնչվող դրույթների նկատմամբ հսկողություն իրականացնելու և դրանց խախտումների դեմքում պատժամիջոցներ կիրառելու նղանակների հարցը: Նպատակահարմար կլիներ այս ուղղությամբ բարելավել Ընտրական օրենսգիրքը և/կամ «Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենքը:

27. Քվեարկելու իրավունքները: Ինչպես արդեն նշվել է Համատեղ գնահատման մեջ (CDL-AD (2002) 29, կետ 30), «...օրենսգրքով չեն նախատեսվում քվեարկության հատուկ լնթացակարգերի վերաբերյալ դրույթներ, ինչպիսիք են, օրինակ, վաղ քվեարկության, հեռակա քվեարկության, շարժական քվեատուփենրով քվեարկության կամ արտակարգ այլ լնթացակարգերը։ Նմանօրինակ ընթացակարգերը դուրս բերվեցին ընտրական օրենսդրությունից այն ժամանակ, երբ 1999թ. ընդունվեց Օրենսգիրը, և երբ փորձ էր արվում կրծատել ընտրակենդիրի տարածվածությունը։ Այնուհանդեռա, անխուսափելի արդյունքն այն է, որ մեծ թվով ընտրողներ այժմ հնարավորություն չունեն իրագործելու քվեարկությանը մասնակցելու իրենց իրավունքը։» Քանի որ ընտրողներին թույլատրվում է քվեարկել միայն այն ընտրատեղամասերում, որտեղ նրանց անունները ներառված են ընտրացուցակներում, բոլոր այն ընտրողները, ովքեր չեն կարող ներկայանալ իրենց ընտրատեղամաս (օրինակ, հիվանդանոցային բուժում անցնողները), ըստ էության դուրս են մնում քվեարկությունից։ Միակ բացառությունը վերաբերում է զինծառայողներին, ինչպես նաև օտարենրկրյա քաղաքացիներում բնակության կարգավիճակ ունեցող կամ բնակություն հաստատած ՀՀ քաղաքացիներին (տես վերը)։ Համատեղ գնահատման համաձայն (CDL-AD (2002) 29), զանկալի կլինիկ գտնել այս կերպ բացառված ընտրողների թիվը նվազեցնելու մեխանիզմներ, սակայն սա կախված է ընտրակենդիրի փաստացի ռիսկից։

28. Հաշվի առնելով ընտրակենդիրի ռիսկը, զանկալի կլինիկ քննարկել, թե արդյոք հաստատվել է հավասարակշիռ մոտեցում մի կողմից ընտրությունների անաշառությունն ապահովելու նպատակով խստություն ցուցաբերնելու անհրաժեշտության, իսկ մյուս կողմից, քաղաքացիների քվեարկելու իրավունքները պաշտպանելու նպատակով ճկունություն դրսուրելու անհրաժեշտության միջև։ Առնվազն, կարենի է ասել, որ եթե ընտրակենդիրի ռիսկը նվազեցնելու նպատակով, օրինակ, ձեռնարկվելու են մի քանի անգամ քվեարկելը կանխելու այլ միջոցներ, ապա անհրաժեշտ կլինիկ դիտարկել քվեարկության հատուկ հսկող ընթացակարգերի սահմանումը (վերահաստումը) այն քաղաքացիների համար, ովքեր անկարող են այցելել իրենց ընտրատեղամասեր։ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) Հայաստանում Նախահագական ընտրությունների դիտորդական ժամանակավոր կոմիտեն և ԵԽԽՎ-ի Հայաստանում Խորհրդարանական ընտրությունների դիտորդական ժամանակավոր կոմիտեն Հայաստանի Հանրապետության Խորհրդարանին առաջարկեցին Ընտրական օրենսգրքում սահմանել շարժական քվեատուփենր նախատեսող դրույթներ (փաստաթուղթ 9742, կետ 42, փաստաթուղթ 9836, կետ 47)։ Ցանկացած պարագայում, անհասկանալի է, թե ինչու պետք է արտերկրում գտնվող քաղաքացիները կարողանան քվեարկել, իսկ Հայաստանում գտնվող այն քաղաքացիները, ովքեր անկարող են ընտրատեղամաս ներկայանալ, ոչ։ Նույն անհամապատասխանությունը գոյություն ունի զինծառայողների և, օրինակ, ընտրությունների օրը հերթապահող ուսի�կանների միջև։

29. Զինծառայողների և արտերկրում գտնվող քաղաքացիների քվեարկելու իրավունքները: Բանակայիններին ընձեռնվում է քվեարկելու հնարավորություն, սակայն միայն նախագահական ընտրություններում և համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրություններում։ Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ զինվորական ծառայություն կատարող կամ զինվորական ուսումնական հավաքների մասնակցող զինծառայողները չեն կարող մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և մեծամասնական ընտրակարգով Ազգային Ժողովի ընտրություններին (տես հոդված 2.6 և հոդված 10.1)։ Նույնը վերաբերում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, ովքեր

ունեն քվեարկելու իրավունք, սակայն քնակփում են կամ գտնվում օտար պետություններում (հոդված 51):

30. Զնայած որ ողջունելի է, որ զինծառայողներին և արտերկրում գտնվող քաղաքացիներին ընձեռնվում է քվեարկելու իրենց իրավունքն իրականացնելու հնարավորություն, սակայն հարկ է նշել, որ այս իրավունքից նրանք օգտվում են միայն ընտրատարածքների հիման վրա չանցկացվող ընտրություններում: Այս արգելքի իմաստը, հնարավոր է, բխում է զինծառայողների և արտերկրում քվեարկողների համար ընտրատարածքների սահմանման պրակտիկ պրոբլեմներից, կամ այն ենթադրությունից, թե զինծառայողները կամ արտերկրում գտնվող քաղաքացիների կապը կոնկրետ ընտրատարածքի հետ միմիայն մակերեսային է: Մյուս կողմից, հատկապես խորհրդարանական ընտրությունների դեպքում, այս արգելքը խախտում է ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը (որն ամրագրված է Ընտրական օրենսգրքի 1-ին և 4-րդ հոդվածներում), քանի որ զինծառայողներին և արտերկրում գտնվող քաղաքացիներին թույլատրվում է մասնակցել խորհրդարանական ընտրություններին միայն համամասնական, սակայն ոչ՝ մեծամասնական ընտրակարգի շրջանակներում: Այսպիսով, հարկ է վերանայել այն հարցը, թե արդյոք զինծառայողները և արտերկրում գտնվող քաղաքացիները պետք է իրավունք ունենան մասնակցելու նաև ընտրատարածքային ամրագրման սկզբունքով անցկացվող ընտրություններին: Նման պարագայում անհրաժեշտ կլինի գտնել որոշակի մելսանիզմներ, որոնց օգնությամբ կորոշվի, թե որ ընտրատարածքներում են իրավասու քվեարկել զինծառայողները և/կամ արտերկրում գտնվող քաղաքացիները: (Որոշ երկներում զինծառայողների և/կամ արտերկրում գտնվող քաղաքացիների քվեարկության նկատմամբ կիրառվում են առանձին ընթացակարգներ): Օրինակ, ոչ ռեզիդենտ ընտրողները կարող են գրանցվել այն ընտրատարածքներում, որտեղ նրանք բնակվել են նախքան երկրից մեկնելը, իսկ զինծառայողները՝ այն ընտրատարածքներում, որոնցում գտնվում է նրանց մշտական բնակության վայրը, կամ, հնարավոր է, որոնցում նրանք կատարում են զինծառայություն:

31. Ընտրացուցակների կազմումը և վերանայումը: Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն, ընտրացուցակները մշտական կարգով կառավարվող փաստաթղթեր են, որոնք կազմվում են համայնքներում, ըստ ընտրատեղամասների: Դրանք կազմվում և վարչում են համայնքապետների կողմից, և ենթակա են վերանայման յուրաքանչյուր տարվա դեկտեմբերին և հունիսին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ՎԵՆԵՏԻԿԵՐԱՆ հանձնաժողովի համատեղ գնահատման համաձայն (CDL-AD (2002) 29, կետ 24), գրանցման գործընթացի բարելավումից հետո սկզբունքորեն բավարար կլինի, եթե ընտրացուցակները վերանայվեն մեկ անգամ, պայմանով, որ վերանայումը կատարվի արդյունավետորեն: Հետևաբար, առաջարկվում է հաջորդ եինք տարիների ընթացքում շարունակել ընտրացուցակների վերանայումը տարին երկու անգամ, որից հետո միայն մտածել տարին մեկ անգամ վերանայելու տարբերակի անցնելու մասին:

32. Հսկողությունն ընտրացուցակների նկատմամբ: ԿԸՀ-ն և ՏԸՀ-ները հսկողություն են իրականացնում ԿԸՀ-ի կողմից սահմանված ընթացակարգներին համապատասխան ընտրացուցակների կազմման և վարման նկատմամբ: Օրենքում նշվում է, թե քաղաքացիները, վստահված անձինք և հանձնաժողովի անդամներն ինչպես կարող են ստուգել նախնական ընտրացուցակները և դիմել համայնքապետներին ընտրացուցակներում ուղղումներ կատարելու հարցով (տես հոդված 9.9, հոդված 12, հոդված 14): Կա մեկ այլ դրույթ, որի համաձայն ընտրացուցակներում անձշտությունները կարելի են բողոքարկել դատական կարգով (հոդված 14.3): Ողջունելի է այն զարգացումը, որի շրջանակներում Սահմանադրական Դատարանի

2002թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ (CCD-389) քննականվեց դրույթն այն մասին, որ ընտրացուակները ննթակա չեն փոփոխության քվեարկությանը նախորդող երկու օրերի ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը, նույնիսկ դատական որոշմամբ: ՍԴ այս որոշման համաձայն, քվեարկության մասնակիցն իրավասու է իր ընտրական տնդամասի ընտրացուակում ներառվելու հայցով դիմու դատարանին նույնիսկ քվեարկության օրվա ընթացքում:

33. Այնուհանդերձ, Ընտրական օրենսգրքում բավարար չափով նախատեսված չէ, թե ընտրական հանձնաժողովները, մասնավորապես ԿԸՀ-ն, ինչպես կարող են հսկողություն իրականացնել ընտրացուակների նկատմամբ: Համայնքապետները պարտավոր են ըստ տեղամասների ընտրացուակները տվյալ տեղամասի ընտրատարածքը վերահսկող կառույցի դեկավարին և ՏԸՀ-ներին ներկայացնել ընտրություններից միայն 40 օր առաջ (հոդված 9.8): Ընտրացուակների կապակցությամբ, ըստ ներևույթին, ԿԸՀ-ն իրավասու է միայն սահմանել դրանց կազմման, ստուգման և դրանցում ուղղումներ կատարելու կարգը (տես նաև հոդված 41.4 և հոդված 41.8), սակայն ոչ՝ իրականացնել կամ վերահսկել այդ ընթացակարգը:

34. Ընտրողների ազգային գրանցամատյանի քազակայությունը: Ընտրական օրենսգիրքն ընթերցողի համար պարզ չի դառնում, թե ինչպես կարելի է կանխել համայնքի սահմաններից անդին ընտրացուակներում միևնույն ընտրողների անունները մի քանի անգամ ներառնելը, հաշվի առնելով, որ Հայաստանում քաղաքացիական կամ ընտրական կենտրոնացված գրանցամատյան (ոենստր) գոյություն չունի: Լուրջ ջանքներ պետք է գործադրվեն, որպեսզի ստեղծվի կանոնավոր կերպով թարմացվող ազգային քաղաքացիական/ընտրական գրանցամատյան:

35. Որպեսզի տեղեկատվության պակասի հետևանքով ընտրողների՝ պայմանագրությունը լրացնելու համար պահանջները պահպանության մասին, որ տեղամասում պետք է իրենք քվեարկեն:

36. «Թանաքոտում»: Մի քանի անգամ քվեարկելու դեպքերի թիվը կրճատելու նպատակով ցանկալի է Ընտրական օրենսգրքի նրբորդ բաժնում ավելացնել դրույթ, որի համաձայն ընտրատեղամասում ընտրողների մատների վրա կդրվեն չգնջվող թանաքով նշաններ: Անցումային շատ պետություններում «թանաքոտումը» համարվում է կարևոր քայլ մի քանի անգամ քվեարկելու ռիսկի կրճատման ուղղությամբ:

37. Քվեաթերթիկներ: 2002թ. կատարված փոփոխություններով ուժը կորցրած ճանաչվեց 49.4 հոդվածը, որով նախատեսվում էր, որ թեկնածուների անունները պետք է քվեաթերթիկի վրա շարադրված լինեն այբբենական կարգով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկյան Հանձնաժողովի Համատեղ գնահատման համաձայն, «սա, ըստ ներևույթին, անպատճական է թողնում հարցն այն մասին, թե թեկնածուների (և կուսակցությունների) անուններն այսուհետ ինչպիսի հերթականությամբ պետք է դասավորվեն քվեաթերթիկի վրա» (CDL-AD (2002) 29, կետ 25): Այնուհանդերձ, 82.1 հոդվածով նախատեսվում է, որ Հանրապետության նախագահի ընտրություններում թեկնածուների ազգանուններն այբբենական կարգով դասավորվում են քվեաթերթիկի վրա: 114.2 հոդվածով նախատեսվում է Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններում կուսակցությունների/դաշինքների անվանումների դասավորումը քվեաթերթիկի վրա այբբենական կարգով: 114.4 հոդվածով նույնը նախատեսվում է Ազգային ժողովի մնամասնական ընտրակարգով ընտրությունների

համար: Նույնը վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին (հոդված 130.2, հոդված 130.3):

38. Հայտնի չէ,թե ինչու է ուժը կորցրած ճանաչվել 49.4 հոդվածը: Համակարգային պատճառ կարող է լինել այն, որ նշված հոդվածը նախատեսում էր այբբենական կարգ միայն թեկնածուների անունների, սակայն ոչ՝ կուսակցությունների/դաշինքների անվանումների պարագայում: Այսպիսով, հնարավոր է, որ այդ հոդվածը, որպես ընդիանուր դրույթ, ապակողմնորոշող էր համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրությունների դեպքում: Յանկացած պարագայում, 49.4 հոդվածի ուժը կորցրած ճանաչումը չի կարող համարվել խնդրահարույց այնքանով, որքանով թեկնածուների անունների կամ կուսակցությունների/դաշինքների անվանումների հերթականությունը կարգավորված է Ընտրական օրենսգրքի՝ տարբեր ընտրությունների վերաբերյալ կոնկրետ դրույթներում: Այբբենական կարգով դասավորումը կարելի է փոխարինել այնպիսի այլընտրանքով, ինչպիսին է վիճակահանությունը:

39. Քվեաթերթիկների պաշտպանվածության միջոցառումներ: Նախորդ ընտրություններում արձանագրվեցին քվեաթերթիկների խարդախ օգտագործման դեպքեր, որոնց պարագայում, օրինակ, քվեարկության օրվանից առաջ ի հայտ էին գալիս նախապես կատարված նշումով, կնքված քվեաթերթիկներ: Հարկ է դիտարկել այնպիսի տարբերակ, ինչպիսին է դակված (պերֆորացված) քվեաթերթիկների ներդրումը՝ ելունդների վրա տպված հերթական համարներով: Այս կերպ հնարավոր կլինի անընդհատ հետևել և հաշվառել, թե քանի քվեաթերթիկ է թողարկվել և օգտագործվել: Տպագրման գործընթացի հրապարակայնությունն ապահովելու նպատակով պետք է պահանջնել, որպեսզի հրապարակվեն տեղեկություններ քվեաթերթիկների տպագրությանը մասնակցող տպարանի (տպարանների), ինչպես նաև ՏՀՀ-ներին/ՏԵՂՀՀ-ներին հատկացված քվեաթերթիկների քանակության և հերթական համարների մասին: Հաշվետվողականության կտրվածքով առաջարկվում է, որպեսզի լրացվեն առանձին արձանագրություններ տպագրված քվեաթերթիկների քանակության և հերթական համարների, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների յուրաքանչյուր օդակի կողմից ստացված/ուղարկված քվեաթերթիկների քանակության և հերթական համարների նշումներով:

40. «Բոլորին դեմ» քվեարկելը: Կայացած ժողովրդավարությունների համար դեռևս արտասովոր նրանույթ է ժխտողական քվեի հնարավորության նախաձեռնումը («Դեմ եմ բոլորին», «Դեմ եմ», տես հոդված 57.1 և հոդված 57.2): Ժխտողական քվեն քիսում է ոչ մրցակցային ընտրությունների կոմունիստական ավանդույթներից և մինչ օրս օգտագործվում է հետկումունիստական մի շարք պետություններում: Այս ընտրողին հնարավորություն է լրնակում՝ արտահայտելու դժգոհությունը քվեաթերթիկում նշված թեկնածուների և կուսակցությունների/դաշինքների առնչությամբ: Այս կերպ, սակայն, քննակշռության մեջ կարող է սրվել քաղաքական և կուսակցական անտարբերությունը, եթե ընտրողները կարողանան պարզապես մերժել բոլոր թեկնածուներին և կուսակցություններին, քան՝ կայացնել որոշում (որը հաճախ այնքան էլ հեշտ չէ) այն մասին, թե որ թեկնածուն կամ կուսակցությունը/դաշինքն է ավելի լավը (կամ որն է չարյաց փոքրագույնը): Հետևաբար, խորհուրդ է տրվում, որպեսզի այս տարբերակը դուրս թողնվի քվեաթերթիկներից:

41. Քվեաթերթիկի վրա նշում կատարելու կարգը: Խորհուրդ է տրվում, որպեսզի գործող Ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածում ավելացվի ընդիանուր դրույթ, որը կահմանի, որ քվեաթերթիկը պատշաճ կերպով նշված, իսկ քվեն՝ վավեր է համարվում

այն դեպքում, երբ ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա (տես CDL-AD (2002) 29, կետ 27):

**42. Ընտրությունների դիտորդները:** Ընտրական օրենսգրքի 30.4 հոդվածի համաձայն, «Վստահված անձը եւ դիտորդը քվեարկության օրը հետևում են ընտրական հանձնաժողովի աշխատանքներին: Դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին կարող են ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ, որոնց կապակցությամբ վերջինս ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ»: Վենետիկյան Հանձնաժողովն արդեն իսկ ընդգծել է, որ դիտորդներին չպետք է վերապահի հանձնաժողովի աշխատանքին հետևելու իրավունք, քանի որ դիտորդների դերը չեղոր է. դիտորդները պետք է դիտեն, սակայն ոչ՝ հետևեն (կատարեն «մոնիտորիինգ»): Ընդհանուր առմամբ, նպատակահարմար կիրար Վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները և պարտականությունները կարգավորեն առանձին-առանձին: Ընտրություններում դիտորդների իրավունքները հաճախ կարող են ներ մեկնաբանում ստանալ. ընտրություններում դիտորդական աշխատանք կատարելու մասին դրույթները պետք է վերանայվեն, որպեսզի թե տեղացի, թե միջազգային դիտորդներին հնարավորություն տան անսահմանափակ կերպով մուտք գործելու ընտրական տեղամասեր և ներկա գտնվելու արդյունքների ամփոփման աշխատանքներին, այդ թվում՝ արդյունքների գումարմանը և աղյուսակավորմանը: Նույնը վերաբերում է Վստահված անձանց:

**43. 30-րդ հոդվածով նաև նախատեսվում է, որ դիտորդները և Վստահված անձինք իրավունք ունեն անարգել ծանոթանալու ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին...:** Զի թույլատրվում որևէ կերպ սահմանափակել Վստահված անձանց և դիտորդների իրավունքները: Նոյն հոդվածով սահմանվում է, որ դիտորդները և Վստահված անձինք իրավունք չունեն միտամտելու ընտրական հանձնաժողովների աշխատանքին: Այնուհանդեռա, վերջին ընտրություններում նկատվեց, որ այս հոդվածն ընտրական մի շարք հանձնաժողովների կողմից թյուր մեկնաբանման էր ներարկվել, որի հետևանքով դիտորդներին և Վստահված անձանց թույլ չէր տրվել մոտ տարածությունից դիտել գործընթացը: 30-րդ հոդվածի ձևակերպումը պետք է հստակեցնել, որպեսզի պարզ դառնա, որ դիտորդները և Վստահված անձինք իրավունք ունեն ազատորեն տեղաշարժվելու ընտրական տեղամասում, եթե դա չի խաթարում հանձնաժողովի աշխատանքը և, մասնավորապես, մոտ տարածությունից դիտելու քվեների հաշվարկը, որպեսզի քվեաթերթիկները և քվեատուիքը պարզորոշ կերպով տեսանելի լինեն: Բացի այդ, ինչ վերաբերում է տեղացի դիտորդներին, ապա մի շարք դեպքերում արձանագրվել էր, որ տեղացի դիտորդների կողմից իբրև ԿԵՂ-ի տրամադրած վկայագիր ներկայացվող վկայագրելոր վերջին ընտրություններում կենծ էին եղել: Հնտևաբար, խորհուրդ է տրվում, որպեսզի ներդրվի դրույթ, որով կապահանջվի, որպեսզի տեղացի դիտորդների գործուղղ հասարակական կազմակերպությունները վկայագրեն իրենց համար համար պահանջվում է, որպեսզի այն սատարվի առնվազն երկու Վստահված անձանց կամ ՏԵՂԸ առնվազն երկու անդամների կողմից: Այս դրույթը հատկապես լուրջ խնդիրներ առաջացրեց 2003թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ընթացքում, երբ տեղամասերում

**44. Քվեաթերթյան կարգի խախտումներ:** 57.5 հոդվածի համաձայն, քվեաթերթյան ընթացքում Ընտրական օրենսգրքով ամրագրված քվեաթերթյան կարգի բոլոր խախտումները, ինչպես և ՏԵՂԸ-ների բոլոր որոշումները, արձանագրվում են գրանցամատյանում հանձնաժողովի երկու անդամների կամ երկու Վստահված անձանց պահանջով: Այսպիսով, քվեաթերթյան կարգի խախտման մասին ցանկացած բոլոր գրանցամատյանում արձանագրելու համար պահանջվում է, որպեսզի այն սատարվի առնվազն երկու Վստահված անձանց կամ ՏԵՂԸ առնվազն երկու անդամների կողմից: Այս դրույթը հատկապես լուրջ խնդիրներ առաջացրեց 2003թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլի ընթացքում, երբ տեղամասերում

ներկա էր միայն նրկու վստահված անձ (տես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2003: 6): Այսպիսով, 57.5 հոդվածում անհրաժեշտ է փոփոխություն կատարել՝ թույլատրելու, որպեսզի հանձնաժողովի մեկ անդամը կամ մեկ վստահված անձն իրավունք ունենա հայտարարություն արձանագրելու քվեարկության կարգի խախտման մասին:

**45. Նախարարական արդյունքների հրապարակումը: Ընտրական օրենսգրքում (2002թ. փոփոխություններով հանդերձ) գոյություն ունեն մի քանի դրույթներ, որոնք նախատեսում են նախարարական արդյունքների անհապաղ հրապարակում ԿԸՀ-ի կողմից (հոդված 63.1, հոդված 63.8), ՏԸՀ-ների կողմից (հոդված 42.8, հոդված 62.2), և անգամ ՏԵՊԸՀ-ների կողմից (հոդված 61.6): Պրակտիկայում, սակայն, ընտրությունների նախարարական արդյունքների հայտարարումը և հրապարակումը միջազգային դիտորդների կողմից գոհացուցիչ չի համարվել, օրինակ, 2003թ. նախագահական ընտրություններում: Անորոշություն կար այն մասին, թե արդյոք օրենքով պահանջվում է նախարարական արդյունքների հրապարակում միայն ԿԸՀ-ի, թե նաև ՏԸՀ-ների կողմից: Ավելին, քննարկում էր ընթանում այն հարցի շուրջ, թե արդյոք ընտրական հանձնաժողովները պարտավոր են նախարարական արդյունքներ հայտարարելիս հրապարակել արդյունքները լիարժեք բացվածքով՝ ըստ տեղամասների: Այդ պատճառով, 2003թ. մայիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում ԿԸՀ-ն պաշտոնապես կարգադրեց, որպեսզի ՏԸՀ-ները հրապարակեն թե մեծամասնական, թե համամասնական ընտրակարգով ընտրությունների նախարարական արդյունքները տեղամասների բացվածքով (ի խախտում այս հրահանգի, սակայն, ՏԸՀ-ների մեծ մասը հրապարակեցին միայն ամփոփ նախարարական արդյունքներ): Ավելին, ԿԸՀ-ն պարտավորություն ստանձնեց, որ կիրապարակի համամասնական ընտրակարգով ընտրությունների նախարարական արդյունքները տեղամաս առ տեղամաս: Զնայած որ սա դրական զարգացում է, տարբեր օղակների կողմից նախարարական արդյունքների հրապարակման մասին իրավական նորմերը պետք է առավել հստակորեն և ուղղակիորեն ամրագրվեն Ընտրական օրենսգրքում: Օրենքով պետք է պահանջվի ընտրությունների նախարարական մանրակրկիտ արդյունքների հրապարակում բոլոր օղակների կողմից, և դրանց անմիջական փակցնելը ընտրական տեղամասի դիմային մասում:**

**46. Ընտրությունների արդյունքների ամփոփում: 83-րդ հոդվածում պետք է հղում կատարել միայն 63-րդ հոդվածին (բայց ոչ՝ 60-րդին):**

**47. Ընտրությունների արդյունքները (ավագանիներ): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վեննատիկյան Հանձնաժողովի Համատեղ գնահատման մեջ նշվում է Ընտրական օրենսգրքի մի փոքր անհամապատասխանություն. «120-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն, որի համաձայն մինչև 3,000 քնակից ունեցող համայնքում ավագանու չափը մեծացվել է՝ հինգ անդամից հասցենով յոթի: 134-րդ հոդվածի չորրորդ կետում պետք է նմանօրինակ փոփոխություն կատարել՝ նախատեսնելով մանդատների տրամադրում առաջին յոթ, այլ ոչ՝ հինգ տեղերը գրաված թեկնածուներին» (CDL-AD (2002) 29, կետ 33): Այնուհանդերձ, քանի որ ավելի խոշոր համայնքներում, որոնցում բազմամանդատ մի քանի մեծամասնական ընտրատարածքներ կան, նախկինի նման պետք է ընտրվեն հինգ ավագանիներ (տես հոդված 121.2, կետեր 2 և 3, և հոդված 121.3, կետեր 2 և 3), 134.4 հոդվածը պետք է վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հնգանդամ ընտրատարածքների դեպքում առավելագույն ձայներ հավաքած հինգ թեկնածուները, իսկ յոթանդամ ընտրատարածքների դեպքում՝ յոթ թեկնածուները, որոնք առաջադրվել են որպես համայնքի ավագանու անդամներ, համարվում են ընտրված տվյալ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածքում»:**

48. Բողոքներ և գանգատներ: Բողոքների և գանգատների հետ աշխատանքը ժողովրդավարական ընտրությունների կարևոր մաս է կազմում: Համատեղ գնահատման համաձայն (CDL-AD (2002) 29, կետ 36), բողոքների և գանգատների ընության վերաբերյալ Օրենսգրքով նախատեսված կարգը հստակորեն սահմանված չէ և շատ խճճված է: Համատեղ գնահատման մեջ խորհուրդ է տրվում, որպեսզի 40.1 հոդվածը վերածնակերպվի որպես ընդհանուր դրույթ բողոքների և գանգատների մասին, և որպեսզի բողոքների և գանգատների վերաբերյալ բոլոր դրույթները հավաքվեն մեկտեղ՝ մեկ գլուխ մեջ: Միջազգային դիտորդների գենույցներում նույնպես բողոքների և գանգատների ընթացակարգերը նկարագրվում են որպես անբավարար և շփոթելուցից:

49. Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները են անգործությունը, կարող են բողոքարկվել վերադաս ընտրական հանձնաժողով կամ դատարան (հոդված 40, տես նաև հոդված 41.11 և հոդված 42.7): Ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերը, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված վեճերի, լուծում է սահմանադրական դատարանը (հոդված 40.4): Այսուհանդեռձ, կարդալով Ընտրական օրենսգիրքը, մի քանի խնդիրներ մնում են անպարզ կամ վիճարկելի: 2003թ. խորհրդարանական ընտրություններում, օրինակ, շփոթմունք էր առաջացել այն հարցի շուրջ, թե արդյոք մեծամասնական ընտրակարգի վերաբերյալ ՏՀՀ որոշումները կարող են բողոքարկվել կը: Ընթերցելով Ընտրական օրենսգիրքը, պարզ չէ, թե ինչո՞ւ այդ որոշումները կը ի՞ն կողմից չեն համարվել կը ի ընդդատությանը ենթակա: Ավելի կարևոր է այն խնդիրը, որ Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրության հնարավորությունը՝ բողոքարկելու կամ վերադաս ընտրական հանձնաժողովի, կամ դատարանի, այնքան էլ լավ լուծում չէ (Ընտրական իրավահարաբերություններում լավ գործելակերպի կանոնագիրը, II.3.3.c):

50. Հարկ է նշել, որ բազմաթիվ նորաթուիլ ժողովրդավարական երկրներում ընտրությունների վարչարարությամբ զբաղվող մարմինների կողմից բողոքների ուսումնասիրությունը կատարվում է մեկ հինրարիխիկ գծով և կիրառվում է նախքան դատական կարգով բողոքարկումը: Հետևաբար, ընտրական գանգատների մասին վերջնական որոշումը կայացնում է ընտրությունների վարչարարությամբ զբաղվող մարմինների շարքում բարձրագույնը, այսինքն, կը-ն: Որոշ երկրներում հնարավոր է կը ի որոշումների բողոքարկումը դատական կարգով, սակայն, ընդհանուր առմամբ, միայն հատուկ դատարան, այսինքն՝ կամ Սահմանադրական դատարան, կամ Գնրագույն դատարան: Այլընտրանքային մոտենցում կլիներ, եթե ընտրությունների վերաբերյալ բոլոր գանգատները հնարավոր լիներ լուծել դատական համակարգում: Այսպիսի մոտենցումը, սակայն, ողջամիտ տարբերակ կարող է լինել այնպիսի երկրներում, որտեղ մեծ վստահություն կա դատական համակարգի արհեստավարժության և անկախության նկատմամբ: Նման պարագայում կարևոր է, որպեսզի բողոքարկումն ընթանա ստորին ատյաններից մինչև վերին ատյանների դատարաններ: Հայաստանի Ընտրական օրենսգրքում, ըստ երևույթին, բողոքարկման ընթացակարգերը խառն են: Ընտրական հանձնաժողովի որոշման դեմք կարող է ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողովի կամ առաջին ատյանի դատարանի, որն ընդդատություն է իրականացնում տվյալ որոշումը կայացնող ընտրական հանձնաժողովի նկատմամբ: Առաջին ատյանի դատարանի որոշումները Հայաստանում դատական կարգով հետագա վերանայման ենթակա չեն: Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսնելու բողոքարկման և գանգատարկման հատակ և ողջամիտ ընթացակարգեր, և խուսափելու ընդդատության բախումներից (տես նաև CDL-AD (2002) 23 փոփ., գլուխ II.3.3):

**51. Դատական որոշումների բողոքարկումը:** Նույնիսկ եթե պահպանվի բողոքարկման գործող համակարգը, անհրաժշտ է նրաշխավորնել, որպեսզի ընտրական բողոքների վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացվեն ողջ երկրում: Այսօր խնդրահարույց է այն, որ ընտրական հանձնաժողովների գրնթեն բոլոր որոշումները կարող են բողոքարկվել միայն առաջին ատյանի դատարան, սակայն ոչ ավելի բարձր: Քանի որ առաջին ատյանի դատարանների որոշումները չեն կարող բողոքարկվել երկրի ողջ տարածքում, գոյություն ունի վտանգ, որ ընտրական օրենսդրությունը միատեսակ կիրառություն չի ստանա: Հենց այդպես եղավ, օրինակ, 2003թ. ընտրություններում: Այսպիսով, Ընտրական օրենսգրքում անհրաժշտ է փոփոխություններ կատարել՝ թույլատրելու Առաջին ատյանի դատարանների բողոքարկումը: Որպես այլընտրանք, ԿԸՀ-ն պետք է լրացնից պարտականություններ ստանա, որպեսզի ապահովի ընտրական բողոքների վերաբերյալ համահունչ որոշումների կայացումը երկրի ողջ տարածքում:

**52. Ընտրական խախտումներ:** Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի Ընտրական օրենսգրքը, ի տարբերություն բազմաթիվ այլ ընտրական օրենսգրքների, ներառում է Ընտրական օրենսգրքի խախտումների դիմաց պատասխանատվության վերաբերյալ միայն մի կարճ գլուխ: 139-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անձանց մի շարք գործողությունների դիմաց: Այնուհանդեռա, պարզ չէ, թե արդյոք ընտրական խախտումների ցուցակը լիարժեք է, քանի որ որոշ դեպքեր, օրինակ, պետական միջոցների թյուրգործածումը կամ լրատվամիջոցներով անպատշաճ վարքագիծը, այնուղի թվարկված չեն: Բացի այդ, որոշ խախտումներ խիստ աղոտ կերպով են ձևակերպված (օրինակ, հոդված 139.13. «ընտրողների կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը», հոդված 139.15. «ընտրական գործառնություններին խոչընդոտելը», հոդված 139.17. «ընտրական հանձնաժողովների անդամների կամ պետական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կողմից ընտրությունների քնականոն լնթացքը խոչընդոտելը», հոդված 139.25. «նախարարական քարոզության քնականոն լնթացքը խոչընդոտելը») (տես նաև CDL-AD (2002) 29, կետ 36): Ի վերջո, ընտրական խախտումներին «կշիռներ» վերագրված չեն: Ընտրական հանցագործությունները չեն տարբերակվում ընտրական վարչական իրավախախտումներից: Սույն մեկնաբանություններում հնարավոր չէ հստակողեն նշել, թե արդյոք Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական խախտումները դիտարկվում են որպես հանցագործություններ, թե որպես վարչական իրավախախտումներ, համաձայն Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի կամ որևէ այլ օրենքի: Յանկացած պարագայում, կարևոր է, որպեսզի ընտրական խախտումները Ընտրական օրենսգրքում և/կամ այլ օրենքներում լիարժեք և մանրամասն կերպով նկարագրված լինեն:

**53. Ընտրական խախտումների համար նախատեսված պատիժները:** Միջազգային դիտորդները քննադատնեցին այն փաստը, որ Ընտրական օրենսգրքն ընտրական խախտումների դիմաց համարժեք պատժամիջոցներ չի նախատեսում: Խսկապես, Ընտրական օրենսգրքով որևէ պատժամիջոց նախատեսված չէ: Միջազգային փորձի հիման վրա կարելի է ասել, սակայն, որ սա այնքան էլ հազվադեպ չի պատահում: Բազմաթիվ երկրներում ընտրական խախտումների դիմաց պատժամիջոցները նկարագրված են Քրեական օրենսգրքում կամ այլ օրենքներում: Այնուհանդեռա, հաշվի առնելով ընտրական լայնատարած խախտումների համար քրեական հետապնդում չի հականացնելը և անպատժնիությունը, օրինակ, Հայաստանում տեղի ունեցած 2003թ. նախագահական ընտրություններից հետո, նպատակահարմար կլիներ

փոփոխություններ կատարել 31-րդ գլուում: Օրինակ, Ընտրական օրենսգիրքը կարող է նախատեսնել, որ ընտրական հանցագործությունները հետապնդվելու են պնտության կողմից և պատժվելու են օրենքով սահմանված կարգով: Ընտրական օրենսգրքով կարելի է նաև պարտավորեցնել ընտրական հանձնաժողովների նախագահներին կամ անդամներին, որպեսզի նրանք դատախազներին հայտնեն ընտրություններին առնչվող բոլոր այն հանցագործությունների մասին, որոնք արձանագրվել են իրենց պատասխանատվության ենթակա տարածքում: Ընտրական օրենսգրքով կարելի է անգամ ամրագրել վարչական իրավախախումների դիմաց տուգանքների գումարները: Ի վերջո, պետք է կարգավորել այն հարցը, թե որ մարմինը՝ ընտրական հանձնաժողովը և/կամ դատարանն է իրավասու պատժել որ ընտրական խախտումը, և թե ինչ միջոցներով: Ընտրական օրենսգրքում ընտրական խախտումների համար հետապնդում և պատիժներ իրականացնելու կարգն ուղղակիորեն ամրագրելը կարող է որոշ դրական ազդեցություն ունենալ ընտրական լայնատարած խախտումները սահմանափակելու փորձների առումով (իհարկե, շատ պվիլի կարևոր է արդյունավետ միջոցներ ձեռնարկել ընտրական խախտումների դեմ և օրենքները գործուն կերպով կիրարկել. տես ստորև):

**54. Ազդեցությունն ընտրական իրավունքների վրա և հետևանքներն ընտրական հանձնաժողովների համար:** Սույն մեկնաբանություններում անհնար է գնահատել, թե արդյոք Ընտրական օրենսգիրքը համապատասխանում է Քրեական օրենսգրքին և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին: Այսուհանդեռած, Ընտրական օրենսգրքում և/կամ Քրեական օրենսգրքում պետք է հստակորեն ամրագրել, որ ընտրական հանցագործություններ կատարած (կամ կատարելու փորձ արած) անձինք ոչ միայն կպատժեն ազատազրկմամբ կամ տուգանքով, այլ նաև, հնարավոր է, կկորցնեն իրենց ակտիվ և պասիվ ընտրական իրավունքները: Ցանկացած պարագայում, ընտրական խախտումներ կատարողները չպետք է նշանակվեն որպես ընտրական հանձնաժողովների անդամներ: Այսպիսով, նպատակահարմար կլինի փոփոխել 34-րդ հոդվածը («Ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները»), որպեսզի արգելվի ընտրական հանձնաժողովների կազմում ընտրական հանցագործություններ կատարած անձանց կամ այնպիսի անձանց նշանակումը, ովքեր թույլ են տվել նման հանցագործություններ կատարել: Նույն կերպ, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ թույլատրելու ընտրական պաշտոնյայի հեռացումն այն դեպքում, եթե վերադաս ընտրական հանձնաժողովը կամ դատարանը որոշել է, որ նա պատասխանատու է ընտրական խախտման համար:

**55. Ընտրությունների վերաբերյալ հաշվետվությունը:** Հաշվի առնելով ընտրական օրենսդրության ոչ բավարար իրագործումը և դրա դրույթների անբավարար կատարումը, լրջությամբ խորհուրդ է տրվել, որպեսզի «...ԿԸՀ-ի պարտավորությունները ներառեն ազգային յուրաքանչյուր ընտրությունից հետո Օրենսգրքի խախտումների վերլուծություն, խախտողների դեմ ձեռնարկված միջոցառումների նկարագրություն, տուժողներին տրամադրված հասուցման և անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումների մասին առաջարկություններ ներկայացնելու պարտավորությունը» (CDL-AD (2002) 29, կետ 21): 41-րդ հոդվածում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ պահանջելու, որպեսզի ԿԸՀ-ն ոչ միայն հանդես գա Ազգային ժողովում ընտրությունների կազմակերպման և անցկացման մասին հաշվետվությամբ, այլ նաև իրականացնի ընտրական խախտումների վերլուծություն ընտրություններից հետո, մանրամասնի ձեռնարկված միջոցները և ընտրական օրենսդրության և ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի մեջ պահանջվող բարեփոխումները:

56. **Ժամկետները:** Մի շաբթ այլ խնդիրներ կան, որոնք առնչվում են Ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետներին, օրինակ, ԿԸՀ-ի կազմավորման և լուծարման առնչությամբ: Ընտրական օրենսգրքի 35.2 հոդվածը, 2002թ. հուլիսի փոփոխություններով հանդերձ, նախատեսում է, որ ԿԸՀ-ն կազմավորվում է և սկսում իր գործունեությունն Ազգային ժողովի ընտրություններից 40 օր անց: Զնայած որ ողջունելի է ԿԸՀ-ի վաղ կազմավորումը հաջորդ ընտրություններից երկար ժամանակ առաջ, անհրաժեշտ է ուշի-ուշով վերանայել, թե արդյոք 40-օրյա ժամկետն իսկապես բավարար է ոչ միայն նոր ԿԸՀ-ի կազմավորման, այլ նաև գործող ԿԸՀ-ի գործունեությունը պատշաճ կերպով ավարտի հասցնելու համար: ԵԱՀԿ/ԺՀՄԴԳ-ի և Վենետիկյան հանձնաժողովի Համատեղ գնահատման մեջ արդեն իսկ մատնանշվել են ԿԸՀ-ն ընտրություններից միայն 40 օր անց կազմավորելու որոշ պրակտիկ բարդություններ (CDL-AD (2002) 29, կետ 20):

57. Օրենսգրքի 41.3 հոդվածով պահանջվում է, որպեսզի ԿԸՀ-ի նախագահը ընտրությունների մասին հաշվետվությամբ հանդես գա ընտրությունների տեղի ունենալու 30 օր անց: Խորհուրդ է տրվում գործունեությունն ավարտող Հանձնաժողովին 30 օրվանից մի փոքր ավելի երկար ժամկետ տրամադրել իր աշխատանքը պատշաճ կերպով ավարտին հասցնելու համար:

58. Այս խնդիրը հատկապես կարևորվում է վերահսկիչ-վերատուգիչ ծառայության գործունեության ժամկետների առնչությամբ: 25.11 հոդվածի համաձայն, թե՛կնածուները և կուսակցությունները պարտավոր են, ոչ ուշ, քան ընտրությունների ավարտից 15 օր հետո, իրենց գրանցած ընտրական հանձնաժողովներին ներկայացնել հայտարարագիր իրենց նախընտրական հիմնադրամում նղած միջոցների օգտագործման վերաբերյալ: Ընտրական հանձնաժողովներն իրենց կողմից գրանցված հայտարարագրերը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում ուղարկում են ԿԸՀ-ի վերահսկիչ-վերատուգիչ ծառայությանը: Ստանալով թե՛կնածուների և կուսակցությունների ընտրարշավներում ֆինանսների ծախսման մասին հայտարարագրերը դրանք գրանցած հանձնաժողովներից, վերահսկիչ-վերատուգիչ ծառայությունը 25.11 հոդվածով նախատեսված կարգով ստուգում է դրանք և մեկ ամսվա ընթացքում նույթերը ներկայացնում ԿԸՀ-ի քննարկմանը: Քննարկումների արդյունքում բացահայտված խախտումների վերաբերյալ նյութերը ԿԸՀ-ի որոշմամբ ուղարկվում են առաջին ատյանի դատարան (տես հոդված 26): Ընթերցելով Ընտրական օրենսգիրքը, թվում է, որ վերատուգիչ-վերահսկիչ գործընթացները չեն կարող ավարտվել նախքան գործունեությունն ավարտող ԿԸՀ-ի համար նախատեսված 30-օրյա ժամկետի ավարտը:

59. Ժամկետներն անգամ ավելի խնդրահարույց են թվում, երբ խոսք է գնում կուսակցությունների և թե՛կնածուների կողմից ընտրարշավների հաշվետվությունները վերահսկիչ-վերատուգիչ ծառայությանը ներկայացնելու համար սահմանված 15-օրյա ժամկետի մասին: 2002թ. հուլիսի փոփոխությունների համաձայն ժամկետը վերջնը կրամատվեց՝ 30-ից մինչև 15 օր: Այնուհետեւ, Համատեղ գնահատման մեջ նշվում է, որ «այս դրույթները պետք է ուշի-ուշով քննության առնվեն՝ ապահովելու, որպեսզի ավելորդ շտապողականությունը բացասաբար չանդրադառնա հաշվետվությունների ստուգության վրա» (CDL-AD (2002) 29, կետ 11): ԵԱՀԿ/ԺՀՄԴԳ-ի և Վենետիկյան Հանձնաժողովի կարծիքով, փոփոխություն պետք է կատարվի միայն այն դեպքում, եթե կրամատված ժամկետում հնարավոր չէ ըստ էության տեղափոխվել (տես նաև 32-րդ կետը): Զնայած որ հաշվետվություններին առնչվող այս ընթացակարգերն արագորեն ավարտելն օգտակար է, դա չպետք է տեղի ունենա ստուգության և լիարժեքության

հաշվին: Այսպիսով, պրակտիկայում խնդիրներ առաջանալու դեպքում նպակահարմար կարող է լինել ավելի նրկար ժամկետը:

60. Ցանկալի կլինիկ նաև վնրանայիլ 90-րդ, 92-րդ և 93-րդ հոդվածներով նախատեսված ժամկետները՝ նախատեսնելու Սահմանադրական Դատարանին բողոքարկելու հնարավորությունը: Նման պարագայում նոր ընտրություն պետք է կազմակերպվի միայն Դատարանի որոշումից հետո:

61. Սահմանադրական Դատարանի դատավճիռների արտազոլումն Ընտրական օրենսգրքում: Ի վերջո, Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ արտացոլու Սահմանադրական դատարանի այն դատավճիռները, որոնք համարեն կամ բնկանել են ընտրական օրենսդրությունը: Սա վերաբերում է, օրինակ, 14.3 հոդվածին:

#### **IV. Ընտրությունների կազմակերպումը և անցկացումը. քննարկման ենթակա հիմնահարցներ**

62. Ընդհանուր դիտողություններ: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների հետ կապված հիմնախնդիրներից շատերը պայմանագործված են ոչ թե՛ն Ընտրական օրենսգրքով, այլ դրա անբավարար կիրարկմամբ և գործադիրի մոտ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու քաղաքական կամքի բացակայությամբ: Ընտրական օրենսգրքին անզյալում պատշաճ և լիարժենք կերպով չի կիրարկվել: Այսպիսով, անհրաժեշտ են ոչ միայն բարեփոխումներ ընտրական օրենսդրության մեջ, այլ նաև բարեփոխումներ ընտրությունների կազմակերպման և անցկացման (վարչարարության) մեջ: Լուրջ ջանքեր պետք է գործադրվեն՝ հաղթահարելու ազգային և տեղական ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում առկա թերությունները: Ընտրությունների դիտորդների, մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ի և Եվրոպայի Խորհրդի (տես Հավելվածը) գնենույցների հիման վրա պետք է առանձնացնել հետևյալ հիմնախնդիրները:

63. Ընտրությունների թափանցիկությունը Ընտրական օրենսգրքի հիմնադրությանը է (տես հոդված 7): Պրակտիկայում, սակայն, ստացվել է այնպես, որ անցյալում արհամարիվել են ընտրությունների թափանցիկության ապահովման համար անհրաժեշտ որոշ կարևոր դրույթներ: Պրակտիկ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ բարելավելու ընտրությունների թափանցիկությունը, մասնավորապես, ընտրական հանձնաժողովների աշխատանքի և արդյունքների ամփոփման, ինչպես նաև քվեարկությանը ընտրողների մասնակցության մասին կանոնավոր տեղեկատվության առումներով, 7.6 հոդվածի համաձայն: Հատկապես ողջունելի կլինիկ թափանցիկ ընթացակարգի ամրագրումն ընտրացուցակների վերանայման կապակցությամբ:

64. Ընտրական հանձնաժողովների նիստերը: ԿԸՀ-ի նիստերը քննադատվել են այն պատճառով, որ հաճախ շատ կարճատև են նորմել և անցկացվել են այնպես, որ նպաստավոր միջավայր չեն ապահովել բանավեճի կամ քննարկման համար: Այսպիսով, շատ կարևոր է, որպեսզի ԿԸՀ-ն անցկացնի պարբերական, հերթական և քաց նիստեր: Անհրաժեշտ է ապահովել ընդդիմադիր կուսակցությունները ներկայացնող հանձնաժողովի անդամների, ինչպես նաև վստահած անձանց, դիտորդների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությունը:

**65. Ընտրական հանձնաժողովի որոշումները:** Ընտրական հանձնաժողովների որոշումները պետք է կայացվեն քվորումով և օրենքով պահանջվող ձայների մեծամասնությամբ: Ընդունելի չէ այն, որ ԿԸՀ-ի որոշումների մեծ մասը կայացվել էր ԿԸՀ-ի գործադիր պաշտոնյաների և քարտուղարության կողմից՝ պաշտոնական նիստերի շրջանակներից դուրս: Իհարկե, բողոքների վերաբերյալ որոշումները չպետք է կայացվեն ընտրական հանձնաժողովի անհատ անդամների կողմից՝ առանց հանձնաժողովում պաշտոնապես քվեարկելու, ինչպես տեղի ունեցավ վերջին ընտրությունների ժամանակ: Լուրջ ջանք պետք է գործադրել՝ ապահովելու, որպեսզի ընտրական հանձնաժողովներում որոշումների կայացման գործընթացը համապատասխանի օրենքին:

**66. Ընտրական հանձնաժողովների որոշումների հրապարակումը:** Հնարավոր է, որ ավելի լուրջ ջանքեր պահանջվեն ընտրական հանձնաժողովների, հատկապես ԿԸՀ-ի որոշումները հրապարակելու և դրանք ընտրական պաշտոնյաների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և լրատվամիջոցների շրջանում տարածելու համար: Սա կնպաստենք ընտրական նորմերի առավել անշեղ իրականացմանը:

**67. Ընտրական պաշտոնյաների ուսուցումը:** Ընտրական ուսուցումները երկրում Ընտրական օրենսգրքի դրույթների անշեղ իրականացման և ընտրողներին (անհրաժեշտության դեպքում) անկողմնակալ օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտ նախապայման է: Այսպիսով, ընտրական հանձնաժողովների անդամները պետք է համապատասխան և ստանդարտացված ուսուցում անցնեն ընտրական վարչարարության բոլոր օդակներում: Մասնավորապես, անհրաժեշտ է բարելավել ՏԵՂԸՀ-ների անդամների ուսուցումը:

**68. Ընտրացուցակները:** Զնայած որ Հայաստանում անկախացումից ի վեր մի շարք ընտրություններ են անցկացվել և բազմաթիվ համայնքներում նկատվել են դրական տեղաշարժներ, ընտրացուցակների անձտությունները շարունակում են լուրջ մտահոգություն պատճառներ: Կարևոր է բարելավել ընտրացուցակների որակը և ճշգրտությունը: Խորհուրդ է տրվում ստեղծել ընտրողների ազգային գրանցամատյան, որը հնարավորություն կտա ստուգելու ընտրացուցակներում նույն անվան մի քանի անգամ գրառումը:

**69. Ինչպես նշվեց, վերջին ընտրություններում օգտագործված ընտրացուցակները, չնայած որ դրանք հեռու էին լիովին ճշգրիտ լինելուց, որոշակիորեն բարելավված էին նախկինի համեմատ: Ընտրացուցակների մշակման և փարման գործընթացում առաջ նկած հիմնախնդիրներն առնչվում են ընտրացուցակների հետ աշխատող տարբեր գերատեսչությունների միջև հաղորդակցության խնդրահարույց և հաճախ անբավար համակարգին: Շատ կարևոր է, որպեսզի իշխանություններն աշխատեն տեղեկատվության անխախտ հոսքը և դրա պատշաճ մշակումն ապահովող արդյունավետ մեխանիզմի ստեղծման ուղղությամբ: Ավելին, հարկ է վերաբանայել քվեարկության օրը քաղաքացիների անուններն ընտրացուցակներում ավելացնելու ընթացակարգերը: Դիտորդներն արձանագրել են, որ քվեարկության օրը մի շարք անհատներ դատարանի միջոցով ստացել են քվեարկելու թույլտվություն, չնայած որ դատարանները չեն ստուգել անձնական տվյալները տեղական իշխանությունների հետ, և ստացվել է այնպես, որ շատ դեպքերում քվեարկելու հնարավորություն են ընձեռն քաղաքացիություն չունեցող անձանց կամ այնպիսի անձանց, ում անունները թյուրիմացաբար չեն հայտնվել համապատասխան տեղամասի ընտրացուցակներում: Հաշվի առնելով վերջին ընտրությունների փորձը, խորհուրդ է տրվում, որպեսզի**

քվեարկության օրը կայացվող դատական որոշումներն ընտրողների անուններն ընտրացուցակներում ներառնելու մասին չկայացվեն առանց տեղական իշխանությունների համապատասխան ծառայությունների հետ խորհրդակցելու, որոնք պատասխանատու են ընտրողների/բնակչության ռենստրի վարման և ընտրացուցակների հարցերով:

70. Ընտրողների տեղեկազմածությունը և կրթումը: Ընտրողների տեղեկացման արշավանդին պետք է զարկ տալ: Հոյժ կարևոր է, որպեսզի ընտրողները հասկանան ընտրությունների տարրական կանոնները: Ընտրողները պետք է ոչ միայն տեղեկություններ ստանան ընտրությունների մասին, այլ նաև շահագրգություն, որպեսզի մասնակցեն ընտրական գործընթացին: Հաշվի առնելով ընտրողների գրանցմանն առնչվող իիմնախնդիրները, ընտրողների կրթումը պետք է նաև ընտրողներին կոչ անի՝ ստուգելու իրենց գրանցումն ընտրացուցակներում նախքան քվեարկության օրը: Ընտրողների կրթման նպատակով կարող են օգտագործվել պետական լրատվամիջոցները, նույնիսկ եթե այդ մասին դրույթ գոյություն չունի Ընտրական օրենսգրքում:

71. Թեկնածուների առաջադրման սկզբունքները: Թեկնածուների առաջադրման վերաբերյալ դրույթների տարաբնույթ կիրառումից խուսափելու նպատակով խորհուրդ է տրվում մշակել հստակ և մանրակրկիտ սկզբունքներ և դրանք տարածել ՏԸՀ-ների և թեկնածուների շրջանում: Մասնավորապես, գոյքի սեփականության և մշտական բնակության հայտարարագրման չափորոշիչները պետք է տարբեր ընտրատարածքներում չտարբերվեն:

72. Ընտրական տեղամասների հասանելիությունը հաշմանդամների համար: Զնայած որ թե Ընտրական օրենսգրքով, թե ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգերով նախատեսված են դրույթներ հաշմանդամների կողմից քվեարկելու իրավունքի կատարման խնդիրների վերաբերյալ, ջանքներ պետք է գործադրվեն՝ բարելավելու ընտրական տեղամասների հասանելիության ապահովումը հաշմանդամների համար:

73. Ընտրական գործընթացի չնզոք ներկայացումը հանրային լրատվամիջոցների կողմից: Վերջին ընտրարշավների ընթացքում հանրային լրատվամիջոցները հաճախ կողմնակալ էին՝ հօգուտ գործող պաշտոնյաների: Անհրաժեշտ է ապահովել հանրային լրատվամիջոցների չնզոքությունը:

74. Վստահված անձանց և դիտորդների տեղաշարժի սահմանափակումները: Համաձայն ԿԸՀ-ի 2002թ. օգոստոսի որոշման, ընտրական տեղամասային կենտրոնում միաժամանակ թույլատրվում է միայն մեկ վստահված անձի տեղաշարժը (տես ԵԱՀԿ/ԺՌՄԴ 2003b): Այս որոշումն անհարկիորեն սահմանափակում է վստահված անձանց օրենքով նախատեսված՝ քվեարկության և հաշվարկի ընթացքը դիտելու իրավունքները: Այս իրավիճակը պետք է շտկել, և խորհուրդ է տրվում, որպեսզի ԿԸՀ-ն լրացնի հրահանգներ տա ընտրական հանձնաժողովների անդամներին, որպեսզի նրանք հենտևեն Օրենսգրքի դրույթներին և չսահմանափակեն դիտորդների և վստահված անձանց գործունեությունը, եթե վերջինս չի խաթարում հանձնաժողովի աշխատանքը:

75. Զթույլատրված անձինք: Ընտրական տեղամասային կենտրոններում քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է արգելել չթույլատրված անձանց ներկայությունը: Հնարավոր է, օգտակար կլիներ, եթե ընտրական հանձնաժողովի անդամները, վստահված անձինք և դիտորդները մշտապես

Կրեակի իրենց անվամբ քարտեր («քեզեր»): Սա կինշտացներ ընտրական տեղամասում գտնվելու թույլտվություն չունեցող անձանց ներկայության բացահայտումը:

76. Ուժային մարմինների վարքագիծը: 2003թ. ընտրություններում արձանագրվել է տարբեր ընտրական տեղամասերում ուստիկանության ներկայություն (առանց SԵՂՀՀ-ի նախագահի հրավերի): Խորհուրդ է տրվում, որպեսզի ուստիկանական ուժերին առավել կանոնակարգված հրահանգներ տրվեն այն մասին, թե ինչպես պետք է նրանք վարդեն ընտրությունների ընթացքում: Նույնը ցանկալի կլիններ ապահովել բանակի կապակցությամբ:

77. Ընտրակեղծիքներ: Վերջին ընտրություններում արձանագրվել են ընտրակեղծիքի դեպքեր, ներառյալ քվատուփերի լցոնում և արդյունքների արձանագրությունների կենդում: Ողջունելի է այն զարգացումը, որ 2003թ. խորհրդարանական ընտրություններում ձեռնարկվել են որոշ ուղղիչ միջոցառումներ, օրինակ, մի քանի ընտրատարածքներում վերանցկացվել են մեծամասնական ընտրակարգով ընտրությունները: Ընտրական պաշտոնյանների ուսուցման բարելավումը և ընտրական խախտումների դեմ արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը սկզբից և առաջ հույժ կարևոր նախապայմաններ են կենդիքից խուսափելու համար: Մասնավորապես, պետք է հնարավոր լինի ապահովել, որպեսզի գաղտնի կարգով տպագրված քվաթենրթիկներ չավելացվեն, օրինակ, դրանց համարակալման ճանապարհով: Նույն մոտենցումը տարածվում է քվաթենրթիկների վավերությունը հաստատելու նպատակով դրանց կնքման նկատմամբ:

78. Նախնական արդյունքների հրապարակումը: Ի խախտումն Ընտրական օրենսգրքի և ԿԸՀ-ի հրահանգների, բազմաթիվ SԸՀ-ներ 2003թ. խորհրդարանական ընտրություններում չհրապարակեցին նախնական արդյունքների մանրամասները: Նախնական արդյունքների հրապարակում պահանջող հրահանգները պետք է էլ ավելի շեշտակի ձևակերպեն:

79. Բողոքարկման և գանգատարկման կարգը: Բողոքարկման և գանգատարկման կարգի անհամարժեքությունը և խճճվածությունը հանգեցրել են օրենսդրության տարաբնույթ մեկաբանումների և կիրառության: Ի լրումն Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ բարեփոխումներին (տես վերը), պետք է մշակվեն հստակ և մանրակրկիտ պրակտիկ ուղենիշներ առ այն, թե ինչպես պետք է բողոքներ և ինչպես պետք է արձագանքներ դրանց:

80. Ընտրական օրենսգրքի խախտումների դեմ ձեռնարկվող միջոցառումների անբավարարությունը: Իշխանությունները չեն ձեռնարկել քայլեր Ընտրական օրենսգրքի ակնհայտ խախտումների դեմ: Խախտողները պետք է գործուն պատասխանատվության ներթարկվեն, որպեսզի գրվի ընտրական հանցագործությունների կապակցությամբ անպատճենիկության մթնոլորտը:

## V. Առաջարկությունների սեղմագիր

81. Հաշվի առնելով Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու հետանկարը, խորհուրդ է տրվում.

- Վերանայել ընտրական հանձնաժողովների կազմավորման վերաբերյալ դրույթները՝ նվազեցնելու նախագահական վարչակազմի ազդեցությունը

- հանձնաժողովների աշխատանքի վրա և հզորացնելու ընտրական մարմինների անկողմնակալ գործունեությունը (Ընտրական օրենսգրքի ութերորդ գլուխ),
- արգելել ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնից հեռացումը քվարկության օրվանն անմիջապես նախորդող ժամանակահատվածում կամ հետաձգել նրան պաշտոնից հեռացնելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահը մինչև նորանշանակ անդամի գրանցումը սահմանված կարգով (ութերորդ գլուխ),
  - սահմանել քվորումի ավելի բարձր պահանջ՝ մեծացնելու ընտրական հանձնաժողովների որոշումների ներկայացուցչականությունը (հոդված 39),
  - առավել ստույգորեն և հրապարակայնորեն կանոնակարգել ընտրատարածքների սահմանները գծելու և փոփոխելու կարգը, նվազեցնել ընտրատարածքների միջև ընտրողների թվի թույլատրելի տատանումը 15%-ից մինչև 10%, և պահանջել, որպեսզի ընտրատարածքները ձևավորվեն ընտրությունից ոչ թե 90, այլ 180 օր առաջ (նրբորդ գլուխ),
  - ընտրատարածքների ձևավորումը/վերածնավորումը կատարել ընտրությունների ամսաթվից անկախ՝ ընտրացուցակների պարբերական վերանայումների հիման վրա (նրբորդ գլուխ),
  - հստակորեն սահմանել «մշտական բնակության» հասկացությունը, եթե այն օգտագործվելու է որպես թեկնածության առաջադրման պահանջ (հոդված 65.1, հոդված 97.1),
  - պաշտոնական համատեղելիության նոյնական պահանջներ սահմանել Ազգային Ժողովի համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրություններում առաջադրվող թեկնածուների նկատմամբ (հոդված 97.2, հոդված 97.3),
  - Կուսակցությունների դաշինքներին թույլատրել թեկնածուներ առաջադրել Ազգային Ժողովի ընտրություններում ոչ միայն համամասնական, այլ նաև մեծամասնական ընտրակարգերով (հոդված 104),
  - Կրճատել Ազգային Ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններում կուսակցական ցուցակների գրանցման համար պահանջվող ստորագրությունների նվազագույն թիվը մինչև գրանցված ընտրողների առավելագույնը 1% (հոդված 101.1),
  - Միամանդատ ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով թեկնածուների առաջադրման համար պահանջվող ստորագրությունների թվաքանակը սահմանել յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված ընտրողների ընդհանուր թվի 1%-ից ոչ ավել,
  - Ստուգել թեկնածուների կամ կուսակցական ցուցակների առաջադրման համար անհրաժեշտ բոլոր ստորագրությունները, առնվազն մինչև պահանջվող նվազագույն թվին հասնելը (հոդված 70.3),
  - Մանրամասնորեն ամրագրել թեկնածուների գույքի հայտարարագրերի նկատմամբ ներկայացվող պահանջները (հոդված 67.7, հոդված 100.7, հոդված 106.6),
  - արգելել թեկնածուների կամ կուսակցական ցուցակների թեկնածությունները հանելը, բացառությամբ այդ կապակցությամբ հստակորեն սահմանված չափանիշների հիման վրա (հոդված 78, հոդված 111),
  - ընդարձակել ընտրարշավների նպատակով պետական ռեսուրսների օգտագործումն արգելող դրույթները և դրանցում ներառել պետական և հանրային լրատվամիջոցների կողմից ընտրարշավի վերաբերյալ լրատվության ներկայացումը (հոդված 22),

- լրատվամիջոցների վերաբերյալ նոր դրույթներ սահմանել, օրինակ, նախընտրական քարոզաշավներում մասնավոր լրատվամիջոցների գործունեության կապակցությամբ (հոդված 20),
- սահմանել (վերականգնել) քվեարկության հատուկ կարգ այն քաղաքացիների համար, ովքեր անկարող են ներկայանալ իրենց ընտրական տեղամասներ, եթե ձեռնարկվում են լրացուցիչ միջոցառումներ կեղծիքի ռիսկի նվազեցման ուղղությամբ,
- թույլատրել, որպեսզի զինծառայողները և արտերկրում գտնվող քաղաքացիները քվեարկեն ոչ միայն համամասնական ընտրակարգով, այլ նաև Ազգային ժողովի մնամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններում (հոդված 2.6, հոդված 10.1, հոդված 51),
- մանրամասնորեն սահմանել, թե ընտրական հանձնաժողովները, հատկապես ԿԸՀ-ն, ինչպես կարող է հսկողություն իրականացնել ընտրացուցակների նկատմամբ (հոդված 9.4),
- ստեղծել քաղաքացիների/ընտրողների պարբերաբար թարմացվող ազգային ռենտր, որպեսզի կանխվի տարբեր համայնքների ընտրացուցակներում նույն ընտրողների անունների մեջից ավելի անգամ գրառումը (նրկորդ գլուխ),
- ընտրողներին ծանուցել այն մասին, թե որ ընտրական տեղամասում պետք է նրանք քվեարկեն (նրբորդ գլուխ),
- սահմանել դրույթ, որի համաձայն ընտրողների մատների վրա ընտրական տեղամասներում կդրվեն չշնչվող թանաքով նշաններ, որը կնվազեցնի մի հոգու կողմից մի քանի անգամ քվեարկելու ռիսկը (նրբորդ մաս),
- ձեռնարկել քվեաթերթիկների անվտանգության միջոցառումներ, մասնավորապես, դակված (պնդֆորացված) քվեաթերթիկների ներդրումը՝ ելունդների վրա տպված հերթական համարներով (տասերորդ գլուխ),
- քվեաթերթիկից դուրս թողնել ժխտողական քվեարկության («Դեմ նմ բոլորին», «Դեմ նմ») տարբերակը (հոդված 57.1, հոդված 57.2),
- սահմանել ընդհանուր դրույթ, որի համաձայն քվեաթերթիկը պատշաճ կերպով նշված, իսկ քվեն՝ վավեր է համարվում այն դեպքում, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա (հոդված 57),
- վստահված անձանց, դիտողների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները և պարտականությունները կարգավորել առանձին-առանձին, և ապահովել, որպեսզի թե վստահված անձինք, թե դիտողները հնարավորություն ունենան անսահմանափակ կերպով մուտք գործելու ընտրական տեղամասներ և ներկա գտնվելու արդյունքների ամփոփման աշխատանքներին, այդ թվում՝ արդյունքների գումարմանը և այյուսակավորմանը (հոդված 30),
- սահմանել դրույթ, որով կապահանջվի, որպեսզի տեղացի դիտորդների գործուղող հասարակական կազմակերպությունները ԿԸՀ-ի տրամադրած վկայագրերը կնքեն իրենց ՀՀ կնիքով,
- նախատեսնել, որպեսզի հանձնաժողովի ոչ թե նրկու, այլ մեկ անդամը կամ մեկ վստահված անձն իրավունք ունենա ՏԵՂՀ գրանցամատյանում հայտարարություն արձանագրելու քվեարկության կարգի խախտման մասին (հոդված 57.5),
- պահանջել ընտրությունների նախնական արդյունքների բացվածքի (ըստ տեղամասների) իրապարակում բոլոր օդակների կողմից (հոդված 61, հոդված 62, հոդված 63 և այլն), և դրանց անմիջական փակցնելը ընտրական տեղամասի դիմային մասում,

- վերացնել ոճային անհամապատասխանությունը 120-րդ և 134-րդ հոդվածների միջև,
  - սահմանել բողոքարկման և գանգատարկման հստակ և միասնական ընթացակարգեր (հոդված 40),
  - հստակորեն սահմանել ընտրական խախտումների լիարժեք ցանկ և տարբերակել ընտրական հանցագործություններն ընտրական վարչական իրավախախտումներից (հոդված 139),
  - մանրամասնորեն սահմանել, թե ընտրական խախտումներն ինչպես պետք է հետապնդվեն և պատժվեն (գլուխ 31),
  - արգելել ընտրական հանձնաժողովների կազմում ընտրական հանցագործություններ կատարած անձանց կամ այնպիսի անձանց նշանակումը, ովքեր թույլ են տվել նման հանցագործություններ կատարել, և թույլատրել ընտրական պաշտոնյայի հեռացումն այն դեպքում, երբ վերադաս ընտրական հանձնաժողովը կամ դատարանը որոշել է, որ նա պատասխանատու է ընտրական խախտման համար (հոդված 34),
  - պահանջել, որպեսզի ԿԸՀ-ի պարտավորությունները ներառեն ազգային յուրաքանչյուր ընտրությունից հետո Օրենսգրքի խախտումների վերլուծություն, խախտողների դեմ ձեռնարկված միջոցառումների նկարագրություն, տուժողներին տրամադրված հատուցման և անհրաժշտ օրենսդրական բարեփոխումների մասին առաջարկություններ ներկայացնելու պարտավորությունը (հոդված 41.3),
  - վերանայել ԿԸՀ-ի կազմակերպման և լուծարման ժամկետները և վերահսկչ-վերստուգիչ գործընթացների ժամկետները,
  - նոր ընտրություններ կազմակերպելուց առաջ նախատեսնել Սահմանադրական Դատարան դիմելու հնարավորությունը, և
  - Սահմանադրական Դատարանի դատավճիռներն արտացոլել Ընտրական օրենսգրքում (օրինակ, հոդված 14.3):
82. Ինչ վերաբերում է ընտրությունների կազմակերպմանը և անցկացմանը, լուրջ ջանքեր պետք է գործադրվեն հետևյալ ուղղություններով.
- բարելավել ընտրությունների հրապարակայնությունը, հատկապես ընտրական հանձնաժողովների աշխատանքի, ինչպես նաև արդյունքների ամփոփման գործընթացի և ընտրողների մասնակցության տվյալների առնչությամբ,
  - անցկացնել ընտրական հանձնաժողովի պարենտական, հերթական և բաց նիստեր, որոնցում հնարավոր կլինի անցկացնել բանավեճներ և քննարկումներ,
  - ապահովել, որպեսզի ընտրական հ անձնաժողովների կողմից որոշումների կայացման գործընթացը համապատասխանի օրենքին,
  - ամփոփել և հրապարակել ԿԸՀ-ի որոշումները և դրանք տարածել ընտրական պաշտոնյաների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և լրատվամիջոցների շրջանում,
  - ընտրական պաշտոնյաների համար անցկացնել համարժեք, ստանդարտացված ուսուցում,
  - էապես բարելավել ընտրացուցակների որակը և ճշգրտությունը,
  - ձևավորել կենտրոնական/ազգային քաղաքացիական/ընտրողների ռենտեր,
  - բարելավել ընտրողների տեղեկացվածությունը և ընտրողների կրթումը,
  - սահմանել թեկնածուների և կուսակցությունների/դաշինքների գրանցման հստակ և մանրակրկիտ ուղղություն,
  - բարելավել ընտրական տնդամասային կենտրոնների հասանելիությունը հաշմանդամների համար,

- ապահովել ընտրական գործընթացի շեզոք լրատվական ներկայացում հանրային սեփականության լրատվամիջոցների կողմից,
- ուժը կորցրած ճանաչել կԸՆ-ի այն որոշումները, որոնք սահմանափակում են վստահված անձանց ազատ տեղաշարժը տեղամասային կենտրոնի տարածքում ընտրությանը օրվա ընթացքում և լրացուցիչ հրահանգներ սահմանել ընտրական հանձնաժողովների անդամների համար՝ պահանջելով, որպեսզի նրանք հետևեն Օրենսգրքի դրույթներին և չսահմանափակեն դիտորդների և վստահված անձանց գործունեությունը, եթե վերջինս չի խաթարում հանձնաժողովի աշխատանքը,
- գործուն կերպով արգելել չթույլատրված անձանց ներկայությունն ընտրական տեղամասներում,
- ոստիկանության և զինված ուժերի ներկայացուցիչներին հրահանգավորել այն մասին, թե ինչպես պետք է նրանք գործեն ընտրարշավների և քվեարկության օրվա ընթացքում,
- սկզբից և առաջ գործուն քայլեր ձեռնարկել Ընտրական օրենսգրքի խախտումների դեմ,
- ապահովել նախնական արդյունքների մանրամասների հրապարակման վերաբերյալ հրահանգների կիրարկումը,
- սահմանել բողոքարկման և գանգատարկման ընթացակարգների վերաբերյալ հստակ և մանրակրկիտ ուղենիշներ, և
- պատասխանատվության ննդարկել ընտրական խախտումների համար մեղավորներին:

## **Հավելված. օգտագործված փաստաթղթենք**

Եվրոպայի Խորհուրդ 1992. Ընտրությունների դիտման ձեռնարկ (Handbook for Observers of Elections), Ստրասբուրգ:

Եվրոպայի Խորհուրդ, Եվրոպայի Տնտեսական և տարածքային իշխանությունների կոնգրես. Հայաստանում տնտեսական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ հաշվետվություն (20-ը հոկտեմբերի, 2002թ.), CG/Bur (9) 60, Ստրասբուրգ, 14-ը նոյեմբերի, 2002թ.:

Եվրոպայի Խորհուրդ, «Քրավունքի միջոցով ժողովրդավարության» նվիրական հանձնաժողով (Վենետիկյան Հանձնաժողով), 2002. Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում 2002թ. հուլիսին կատարված փոփոխությունները, CDL (2002) 126, Ստրասբուրգ, 9-ը հոկտեմբերի, 2002թ.:

Եվրոպայի Խորհուրդ, «Քրավունքի միջոցով ժողովրդավարության» նվիրական հանձնաժողով (Վենետիկյան Հանձնաժողով), 2003. Ընտրական իրավահարաբերություններում լավ գործելակերպի կանոնագիրը: Ուղեցույց և Բազարական գնկույց: Ընդունվել են Վենետիկյան Հանձնաժողովի կողմից 52-րդ լիազումար նստաշրջանում (Վենետիկ, 18-19-ը հոկտեմբերի, 2002թ.): CDL-AD (2002) 23 փոփ., Ստրասբուրգ, 23-ը մայիսի, 2003թ.:

Եվրոպայի Խորհուրդ, Խորհրդարանական Վեհաժողով, Հայաստանում Նախագահական ընտրությունների դիտորդական ժամանակավոր կոմիտե, Առաջին փուլ (19-ը փետրվարի, 2003թ.), փաստաթուղթ թիվ 9742, 18-ը մարտի, 2003թ.:

Եվրոպայի Խորհուրդ, Խորհրդարանական Վեհաժողով, Հայաստանում Նախագահական ընտրությունների դիտորդական ժամանակավոր կոմիտե, Երկրորդ փուլ (5-ը մարտի, 2003թ.), փաստաթուղթ թիվ 9742, հավելում, 31-ը մարտի, 2003թ.:

Եվրոպայի Խորհուրդ, Խորհրդարանական Վեհաժողով, Հայաստանում Խորհրդարանական ընտրությունների դիտորդական ժամանակավոր կոմիտե (25-ը մայիսի, 2003թ.), փաստաթուղթ թիվ 9836, 23-ը հունիսի, 2003թ.:

Գրաքննության դեմ պայքարի միջազգային կենտրոն, 1994թ., Անցումային ժողովրդավարությամբ երկրներում ընտրությունների հետարձակման ուղևիշներ (Guidelines for Election Broadcasting in Transitional Democracies), Լոնդոն:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 1999. Ընտրությունների դիտման ԺՀՄԻԳ-ի ձեռնարկ (The ODIHR Election Observation Handbook), Վարչակա:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2003a. Հայաստանի Հանրապետություն: Նախագահական ընտրություններ, 2003թ. փետրվարի 19 և մարտի 5, Վերջնական գնկույց, Վարչակա, 28-ը ապրիլի, 2003թ.:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2003b. Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 25-ը մայիսի, 2003թ., Վերջնական գնկույց, Վարչակա, 31-ը հուլիսի, 2003թ.:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Եվրոպայի Խորհուրդ/Վենետիկյան Հանձնաժողով 2002. Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխությունների համատեղ գնահատում, ընդունվել է 2002թ. հուլիսին ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և «Քրավունքի միջոցով ժողովրդավարության» նվիրական հանձնաժողովի (Վենետիկյան Հանձնաժողով) կողմից վերջինիս 52-րդ լիազումար նստաշրջանում (Վենետիկ, 18-19-ը հոկտեմբերի, 2002թ.) պր. Զեսի Պիլգրիմի և պր. Բերնարդ Օուենի մեջնաբանությունների հիման վրա, Վարչակա/Ստրասբուրգ, 8-ը նոյեմբերի, 2002թ., CDL-AD (2002) 29:

Դիտե՛ք Նոհեն/Գրոց, Ֆլորիան/Հարթման, Քրիստոֆ (խմբագիրներ), 2001. Ընտրություններն Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Տվյալների ձեռնարկ, հատոր 1. Մերձավոր Արևելք, Վենետիկյան Ասիա և Հարավային Ասիա

(Elections in Asia and the Pacific. A Data Handbook. Vol. 1: The Middle East, Central Asia, and South Asia), Օրսֆորդ. «Օքսֆորդ Յունիվերսիտի Պրես»:

Ուշարդ Ո-նգ (Խմբ.), 2002. Ընտրությունների միջազգային հանրագիտարան (International Encyclopaedia of Elections), Վաշինգտոն, Կոլումբիա օկրուգ, «Կոնգրեսի Քվորթենրլի»:

Ընտրական օրենսգիրք: Ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1999թ. փետրվարի 5-ին: 2002թ. օգոստոսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ: 1999թ. փետրվարի 5-ի Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով և լրացումներով հանդիրձ: (Ոչ պաշտոնական թարգմանություն):